

Սուսաննա Գ. Հովհաննիսյան
Բանաս. գիյր. դոկտոր

ՄԵԾԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ

Մաս առաջին: Միմոն Զավարյանի և Հովհաննես
Թումանյանի սրտակից բարեկամությունը

1. Ծանոթությունը և առաջին քայլերը

Երկու մեծ լոռեցիների՝ Միմոն Զավարյանի և Հովհաննես Թումանյանի ազգային – հասարակական գործունեությունը 20–րդ դարակազքի հայ քաղաքական կյանքի ուշագրավ էջերից է: Զավարյանը Լոռու Այգեհատ գյուղից էր, Թումանյանը՝ Դսեղից: Զավարյանը մեծ էր ընդամենը 4 տարով (1865 և 1869), սակայն 10 տարի շուտ հեռացավ կյանքից, ուստիև նրանց մահվան տարեկիցների միջև (1913 և 1923) ուղիղ մեկ տասնամյակ է ընկած:

Ազգային երկու մեծությունների հանդիպումների ու փոխգործակցության էջերը սերտորեն առնչվում են ինչպես հայ ազատամարտի առաջատար ուժի՝ ՀՅ Դաշնակցության գործունեությանը, այնպես էլ տվյալ դարաշրջանում հայ ժողովրդի կենսագործունեության տարբեր ոլորտներին: Նրանց ծանոթությունը կայացել է հեռավոր 1884 թվականին արևելահայերի մշակութային մայրաքաղաք Թիֆլիսում, դեռևս պատանի Ստեփան Զորյանի (հետագայում՝ Ռոստոմ) միջնորդությամբ: Վերջինս այդ օրերին բնակվում էր իր հորեղբոր՝ Նավասարդ Զորյանի՝ Հավլաբարում գտնվող տանը, որի մի մասը զբաղեցնում էր նրա քենակալը՝ Հովհաննես Թումանյանի Բաղդի (Բաղդասար) քեռին: 1883 թվականին ուսումը շարունակելու նպատակով Դսեղից Թիֆլիս է գալիս պատանի Հովհաննեսը: Հետագայում Ռոստոմի մասին գրած իր հուշերում Ամենայն Հայոց բանաստեղծը վկայում է, որ նա «...1884 թվականին մի օր եկավ տուն ու հայտնեց, թե էսօր քո հայրենակից մի լավ տղի հետ ծանոթացա: Անունը ազգանունը հարցրի: Ասավ՝ Միմոն Զավարյան»¹: Ստեփան Զորյանն, անշուշտ, ծանոթացրել է նրանց, քանի որ այդ օրերին նա Թումանյանի ամենամտերիմ ու անբաժան ընկերն էր: Հետագայում՝ Ռոստոմի հիշատակին

Ե (ԺԵ) քաղի, թիվ 3 (43) հայիւ-մեպրեմբեր, 2013
ՎԻՄ համահայկական հանդես

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.08.2013:
1 Թումանյան Հովհ., Պատանեկության օրերից, «Երկերի լիակատար ժողովածու», (այսուհետև՝ Թումանյան, ԵԼԺ), հատ. 7, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ, 1995, էջ 378:

նվիրված «Պատանեկության օրերից» հուշ-հոդվածում բանաստեղծը գրում էր. «Ո՛վ կարող էր էն ժամանակ երևակայել, թե երկուսն էլ, տակավին աշակերտներ, տարվելու էին միևնույն գաղափարով ու նույն ցավով, միևնույն չարքաշությամբ անցնելու էին միևնույն ճանապարհը ու թաղվելու էին նույն գերեզմանատանը, կողք կողքի, երկուսն էլ միշտ կարոտ կուլտուրական խաղաղ կյանքի ու աշխատանքի՝ իրենց հետ տանելով միշտ իրենց փայփայած գեղեցիկ ծրագիրները»²:

Թե՛ Թումանյանը և թե՛ Զավարյանը դեռ պատանեկության տարիներից անմասն չէին Թիֆլիսում ծավալվող քաղաքական խմորումների: Հայտնի են Արևմտյան Հայաստանի ազատագրության պայքարին Թումանյանի զինվորագրվելու մասին ժամանակակիցների վկայությունները³: Թումանյանը, ինչպես նաև Ս.Զավարյանը կապված էին 1889 թվականին հիմնված «**Երիտասարդ Հայաստան**»⁴ կազմակերպության հետ: Զավարյանը 1889-ին ավարտել էր Մոսկվայի Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիան, քաջածանոթ էր ռուս հեղափոխական նարոդնիկության տրամադրություններին:

Երկու մեծ լռեցիների ավելի սերտ գործակցությունը սկսվում է հենց «Երիտասարդ Հայաստան» կազմակերպությանը, իսկ քիչ անց նաև՝ ՀՅ Դաշնակցությանն անդամակցելու հետևանքով և շարունակվում է մինչև Զավարյանի մահը: Եվ եթե այն չվերածեց ավելի մեծ մտերմության, ապա պատճառը Զավարյանի կյանքի բարդ ու դժվարին ուղին էր, Կովկասից հաճախակի բացակայելը, մեծ մասամբ հասարակական այլ միջավայրերում գործելը:

1890 թ. ամռանը, երբ Քրիստափոր Միքայելյանի ու Միմոն Զավարյանի ջանքերով ստեղծվում է Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը, «Երիտասարդ Հայաստանը» ձուլվում է ՀՅԴ-ին, որի ղեկավար մարմնի՝ Կենտրոնական վարչության կազմում էր Զավարյանը: Իսկ Թումանյանը՝ իբրև «Երիտասարդ Հայաստանի» անդամ, Զավարյանի հետ միասին հայտնվում է նրա իսկ հիմնադրած կուսակցության շարքերում՝ դառնալով առաջին դաշնակցականներից մեկը⁵: ՀՅԴ-ում էին նրանց հայրենակիցներ Հովսեփ

2 Նույն տեղում, էջ 382:

3 Բանաստեղծի կնոջ՝ Օլգայի հուշերից տեղեկանում ենք, թե ինչպես էր Թումանյանը վաճառել իր նոր ամառային վերարկուն, որպեսզի այդ գումարով ատրճանակ գներ և Վարդան Գոլոշյանի հետ միասին գնար «Տաճկահայաստան» հայրենիքն ազատելու»: Տես Թումանյանը ժամանակակիցների հուշերում (այսուհետև՝ ԹԺՀ), Եր., Հայկական ՄՍՀ ԳԱԱ հրատ, 1969, էջ 329: Մակայն հիվանդությունն ու նոր նշանված լինելու հանգամանքը խանգարում են, և քարերախտաբար, Թումանյանը չի ընկերակցում Գոլոշյանին, ով Պարսկաստանի վրայով մեկնում է Արևմտյան Հայաստան՝ երկու այլ հայրենասերների հետ: 1889-ի գարնանը Վանի ճանապարհին Գոլոշյանը սպանվում է Հովհ. Ագրիպայանի հետ միասին:

4 «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության մասին տես **Խոռոչիյան Գ.**, ՀՅ Դաշնակցության քննական պատմություն. ակունքներից մինչև 1895 թ. վերջերը, Եր. ՀՅ Դաշնակցության հրատ., 2006, էջ 114-138:

5 1889 թ. ձմռանը «Երիտասարդ Հայաստանի» կազմակերպմանը մասնակցել էր նաև Հովսեփ Արղույսյանը: Տես **Միքայել Վարանդեան**, ՀՅ Դաշնակցության պատմություն, հ. 1, Փարիզ, 1932, էջ 57, նաև՝ **Լեռ**, Անցյալից..., Եր., 1925, էջ 84: Անուշավան Աբովյանը (տես N 7 ծանոթությունը) վկայում է Հովսեփ Արղույսյանի և Հովհաննես Թումանյանի՝ արդեն այդ շրջանում անձնապես ծանոթ և միևնույն գաղտնի ընկերության անդամ լինելու մասին: Տես ԹԺՀ, էջ 229: Արղույսյանի և գրողի մի հանդիպումից և գրույցից հետո բանաստեղծն Ան. Աբովյանին խոստացել էր տանել այդ ընկերության ժողովներին: Տես «Հայ հեղինակներին վերաբերող հուշեր», Ան. Աբովյանի հուշատետրը, Եղիշե Զարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝

Արդությանը (Խանասորի Իշխան) և Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ): Հիմնադիր անդամների մեջ էին նաև Թումանյանի նահատակ ընկերոջ՝ Ալեքսանդր Գոլոշյանի քույրը՝ դեռևս աշակերտուհի Դարյա Գոլոշյանը և նրա ապագա ամուսինը՝ Արշակ Թադևոսյանը:

Բանաստեղծի՝ ՀՅԻ անդամ լինելու մասին ակնարկներ կան Մուսկովայի Մ. Բարխուդարյանի տպարանի սրբագրիչ Է. Ավետիսյանի 1890 թ. նամակների մեջ⁶: Իսկ Անուշավան Աբովյանին⁷ ուղղված 1890 թ. սեպտեմբերի 28-ի և հոկտեմբերի 14-ի նամակներում կա Թումանյանի ուղղակի խոստովանությունը ՀՅ Դաշնակցության անդամ լինելու մասին. «**Ընկերության ես այն անդամներից եմ**, որոնց մասին չի կարելի կասկածել անհեռատեսության նկատմամբ»⁸ (ընդգծումը մերն է - Մ.Ա.): Նույնը խոստովանում է սեպտեմբերի 28-ին. «Մկրտիչն ասաց, որ քեզ գրել է, թե Հովսեփի Արդությանցին սպանել են, սուտ է բոլորովին, **ես ընկերության մեջ եմ...**»⁹ (ընդգծումը մերն է - Մ.Ա.):

Թումանյանն ամբողջությամբ կիսում էր ՀՅ Դաշնակցության հայրենասիրական գաղափարները, սակայն ոչ միշտ էր համաձայն պայքարի կոնկրետ միջոցների ընտրության հարցում, ուստի բանաստեղծն ըստ ամենայնի 2-3 տարի մնաց ՀՅԻ շարքերում: Գրականագետ Արամ Ինձիկյանի վկայությամբ՝ 1893 թ. Ղ. Աղայանի խորհրդով նա արդեն հարում էր Հնչակյան կուսակցությանը¹⁰: Հետագայում Թումանյանը կատարել է հետևյալ խոստովանությունը. «Ես ինքս անցել եմ գրեթե բոլոր կուսակցությունների միջից (թեև շատ արագ ու թեթև), և չեմ կարողացել մերվել, ձուլվել ոչ մեկի հետ: Եվ սրա պատճառը հենց նրանց վատությունը չի եղել: Ո՛չ, և ոչ էլ նրանցից հալածվելը, և գլխավորը թերևս է՛ն է, որ ես ուրիշ եմ...Նրանք՝

ԳԱԹ), Թումանյանի ֆոնդ (այսուհետև՝ ԹՖ), էջ 25: Հուշերի այս հատվածը խորհրդային շրջանում հասկանալի պատճառներով տեղ չի գտել «Թումանյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուի մեջ:

6 Է. Ավետիսյանի հուլիսի 10-ի նամակի հարցադրումներից կարելի է առանձնացնել հետևյալը. «Շտրիակալ եմ տեղեկություններ տալուդ համար ուխտ գնալու մասին... արդյոք ինչպե՞ս է շարունակվում ձեր ընկերության գործը կամ թե գոյություն ունի՞ թե ոչ»: Տես **Թումանյան**, Ուսումնասիրություններ և հրապարակումներ (այսուհետև ՈւՀ), հ. 4, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1985, էջ 262): Մեկ այլ նամակում՝ գրված օգոստոսի 6-ին, Է.Ավետիսյանը հարցնում է. «...Արդյոք նոր ընկերության մեջ թասիր կամ թե ոչ?» (ՈւՀ 4, 266): Իսկ օգոստոսի 25-ին նոր լուրեր է սպասում դաշնակցականների և նրանց գործունեության մասին. «Միրելի՛ Հովհաննես, խնդրեմ վերջին անցքերի մասին տեղեկություններ հաղորդես... մանավանդ մեր տղերանց մասին» (ՈւՀ 4, 276): Ցավոք, Է.Ավետիսյանին ուղղված Թումանյանի պատասխան նամակները չեն պահպանվել, դրանցում, անշուշտ, կլինեին ՀՅ Դաշնակցության ստեղծման առաջին օրերին, նրա ծրագրերին ու նպատակներին տրված Թումանյանի գնահատականները: Համեմայն դեպք, իրողությունն այն է, որ գրողի նամակները պատկերացում են տվել Է. Ավետիսյանին ՀՅ Դաշնակցության սկզբնավորման, հայրենիքում կատարվող քաղաքական անցումների և անձամբ Թումանյանի քաղաքական գործունեության մասին: Վերջինս, ներշնչված պոետի հանդեպ հարգանքով ու հավատով, ցանկություն է հայտնել միշտ ծառայել նրան, ով «Հոգով ու սրտով ավիրված է հայրենիքի շահերին... Հայրենիքի, որն այսօր երկունքի մեջ է և դառն արտասուք է թափում...», - 1890 թ. հոկտեմբերի 22-ին գրել է Ավետիսյանը Թումանյանին հասցեագրված նամակում (ՈւՀ 4, 276):

7 Անուշավան Աբովյանը Թումանյանի հայրենակիցն է, նրա պատանեկան տարիների ընկերներից մեկը, գրող, 1862, Լոռու Ուզունլար, այժմ Օձուն գ. - 1938, Օձուն:

8 **Թումանյան**, ԵԼԺ, հ. 9, Եր., 1997, էջ 44:

9 Նույն տեղում, էջ 40: Ըստ ամենայնի բանաստեղծի ՀՅ Դաշնակցության գաղափարներով խանդավառվելու և կուսակցությանն անդամագրվելու գործում իր դերն ունեւ Հովսեփի Արդությանը, ում սպանության կեղծ լուրը, որը կապված էր վերջինիս Արևմտյան Հայաստան գաղտնի մեկնելու հետ, վշտացրել էր նրան:

10 Տես Արամ Ինձիկյան, էջ 368-369:

ՀԻՇՈՂՈՒԻԹՅՈՒՆ

3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

Ե (ԺԵ) քաարի, թիվ 3
ԵՄ համահայկական հանդես

և կուսակցությունները, և նրանց թերթերը կարող են շատ կարևոր ու շատ լավը լինել, բայց դարձյալ «իմ տեղը» չեն լինիլ, և ես ինձ նրանց զինվորը չեմ համարիլ, նրանց անունով ինձ չեմ մկրտիլ»¹¹ :

Թումանյանը գիտեր միմյանցից գատել կուսակցություններն ու գաղափարները, ինչպես նաև գործիչներին, անհատներին, մարդկանց, ովքեր կեղծ ու շիտակ ներկայացնում են իրենց գաղափարները: Ուստի Թումանյանի քաղաքական «երերումները» նրա մարդկային կերպարին հաղորդում են զարմանալի միաձույլ ամբողջականություն և հմայք: Այդ տատանումները, ըստ Քաջագնուհու, ոչ թե «անկայունության», «անտարբերության», «համոզմունքի ու դավանանքի անլրջության», այլ որոնող մտքի խարխափումների հետևանք էին¹²:

1892 թ. դեկտեմբերի 27-ին Թումանյանն ու Ջավարյանը ակտիվորեն մասնակցում են Գրիգոր Արծրունու հուղարկավորության արարողությանը: Ջավարյանն ինքը հուղարկավորության հիմնական կազմակերպիչներից էր: Իսկ Թումանյանը «Մշակի» խմբագրատնից ոչ այնքան հեռու՝ «Հրատարակչական ընկերության» գրասենյակում, կատարել է թաղմանը եկած պատգամավորների և ծաղկեպսակների թվով 308 գրանցում:

Հուղարկավորությունը իշխանությունների դեմ ուղղված ցույցի բնույթ է ստանում առաջին հերթին Ջավարյանի ու նրա կուսակցական ընկերների շնորհիվ: Երբ ոստիկանությունը արգելում է հուղարկավորներին անցնել Գոլովիյան պողոտայով՝ «Ժողովուրդը կը պատռէ ոստիկանութեան շղթան: Ջաւարեան պարագլուխն էր շղթան պատռողներուն»¹³: Ժամանակակիցների վկայությամբ ամենաազդեցիկ դամբանականներից էր Ջավարյանի ելույթը, որը միաժամանակ Արծրունու գործին ու գաղափարներին հավատարիմ մնալու երդում ու խոստում էր երիտասարդների անունից: Ջավարյանը, դիմելով տասնյակ հազարավոր բազմությանը, ասել է. «Հայ երիտասարդութիւնը, թանկագին ուսուցիչ, չի դաւաճանի քո քարոզի ոչ մի կէտին: Նա չի շոյի, չի խոնարհուի մեծամասնութեան առաջ: Նա թոյլ չի տայ հայկական կեանքին կանգնել անշարժութեան մէջ... մենք կը դիմադրենք այն բոլոր տարրերին, որոնք հակառակ են այդ գաղափարներին, եւ կը աշխատենք կեանքի մէջ իրականացնել այդ գաղափարները»¹⁴:

Արծրունու լուսավորական գաղափարների արժևորման հարցում բանաստեղծն ու Ջավարյանը գաղափարական համախոհներ էին:

11 Թումանյան, ԵԼԺ, հ.7, էջ 489:

12 «Գրական թերթ», Եր., 1989, N 43, հոկտեմբերի 20:

13 Միմոն Ջաւարեան, Մահուան եօթանասունամեակին առթիւ, Ա. հատոր, Պէյրուք, Համագայիին Վահէ Մէթեան տպարան, 1983 (այսուհետ՝ «Միմոն Ջաւարեան», հատորն ու էջը), էջ 88: Տե՛ս նաև՝ Գաբրիէլ Լազեան «Միմոն Ջաւարեան (մատոն 1866-1913)», «Յեղափոխական դէմքեր», էջ 25-28:

14 «Միմոն Ջաւարեան», Ա. հատոր, էջ 127-128: Տե՛ս նաև՝ «Միմոն Ջաւարեանի դամբանականը Գրիգոր Արծրունիի դագաղին վրայ», «Վեմ», Փարիզ, 1934, N է: Հաջորդ օրը տեղի են ունենում ձերբակալություններ և բանտարկություններ: Ձերբակալվածները ոստիկանատներից ազատվում են 1893 թ. հունվարի 13-ին, իսկ բանտարկվածները Մեռելիփց ազատվում են հունվարի 25-ին: Տե՛ս նաև՝ «Միմոն Ջաւարեան», հ.Ա, էջ 127:

2. Խառնվածքի ու բնավորության ընդհանրություններն ու տարբերությունները

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Երկու լոռեցիներին հենց սկզբից միավորեց հայ ժողովրդի գոյատևման, նրա ազատության սրբազան գործին նվիրվելու պատրաստակամությունը և պարզապես՝ մարդկային բնավորության ընդհանրությունները, գուցե նաև՝ հայրենակիցներ լինելու հանգամանքը:

Ժամանակավորապես դուրս գալով ՀՅԴ-ից՝ Թումանյանը շարունակում էր իր համագործակցությունը ոչ միայն դաշնակցական առանձին գործիչների, այլև ողջ ՀՅ Դաշնակցության հետ, քանի որ ցանկացած ազգանպաստ գործ, անկախ նախաձեռնողից, սրտամոտ էր պետին: Երկու ազգային և մշակութային գործիչների բնավորությունն ու խառնվածքը շատ ընդհանրություններ ունեին: Երկուսն էլ ունեին մարդկանց իրենց շուրջը համախմբելու կարողություն: Արտաշես Յաղուպյանի¹⁵ խոսքերով՝ Զավարյանը «գործի հանրագիտարան էր»¹⁶, ուներ «հիպնոսացնող ուժ»¹⁷, որն անառարկելիորեն շրջապատին «պարտադրում» էր սեր ու հարգանք. «Ունէր անկեղծութեան ու համարձակութեան այնպիսի անկաշառելի հրապոյր մը, որ մարդիկ իրեն կը քաշէր, հակառակ իրենց կամքին»¹⁸: Իսկ Թումանյանի մասին Իսահակյանը գրում է. «Հասարակության զարդն էր նա... ամենից հարգված, ամենից սիրված... Ով որ նրան մի անգամ տեսներ, կուզեր շարունակ տեսնել»¹⁹: Երկուսն էլ ունեին մեկ այլ ընդհանրություն՝ բացառիկ հյուրասեր էին:

Զավարյանի մասին Միք. Սարկ. ստորագրությամբ հրապարակված հոդվածում կարդում ենք. «Նրա տունը ժողովրդի և իր գաղափարակիցների համար մի կատարյալ «քարվանսարա» էր, ուր ամէն բոլի մարդ ներս ու դուրս անելու, ուտելու, խմելու և իջևանելու իրաւունք ունէր»²⁰: Երկուսն էլ Լոռու արժանավոր զավակներն էին և անդավաճան ու մեծ սիրով կապված էին իրենց ծննդավայրին, երկուսն էլ անսահման սիրում էին հայրենի բնությունը: Թումանյանը վստահ էր, որ «բնությունից հեռացողը դժբախտանում է»²¹: Նա ուզում էր **Լոռիում գրողների տուն կառուցել, որն ունենալու էր** «ճոխ գրադարան և աշխատելու հարմարություններ»²², ինչպես նաև մի առանձնատուն, գրադարանը տեղափոխել այնտեղ և ստեղծագործել: Բանաստեղծը Լոռիում՝ Այգեհատում, գրողների ստեղծագործական տուն կառուցելու նպատակին հատկացրեց Վարվառա Մելիք-

15 Արտաշես Յաղուպյանը Տարոնի Գոմս գյուղի դպրոցի մանկավարժներից էր, դաշնակցական, ում առողջությամբ անհանգստացած՝ Զավարյանը հրահանգել էր նրան տեղափոխվել Մուշ, այնուհետև՝ Հավատորիկ: Տես «Միմոն Զաւարեան», հ. Ա., էջ 684-690: Տես նաև՝ Արտաշես Յաղուպեան, Ս. Զաւարեան Տարոնի մէջ (Հատուածներ), «Հայրենիք» ամսագիր, Պոսթրն, 1951, փետրուար-յունիս:

16 «Միմոն Զաւարեան», հտ.Ա., էջ 684:

17 Նույն տեղում, էջ 694:

18 Նույն տեղում:

19 ԹԺՀ, էջ 20:

20 «Միմոն Զաւարեան», հտ. Ա., էջ 599: Տես նաև՝ Միք. Սարկ., Միմոն Զաւարեանի մահուան առիթով, «Մշակ», Թիֆլիս, հոկտեմբերի 19:

21 ԹԺՀ, էջ 134:

22 Նույն տեղում:

Հայկազյանի²³ անձամբ իրեն կտակած գումարները²⁴:

Այդպիսի մի մշտավառ երազ ուներ նաև Միմոն Զավարյանը: Նա էլ փափագում էր **Այգեհատում կառուցել գյուղատնտեսական տարրական դպրոց**, ուր երկդասյան դպրոցներն ավարտած գյուղացի մանուկները կստանային գյուղատնտեսական գիտելիքներ: Զավարյանի մոր և քրոջ՝ Մարիամի վկայությամբ՝ Միմոնը ազգականների հետ պատրաստ էր այդ նպատակին հատկացնել ազգականներին ու ընտանիքին պատկանող 50 դեսիատին հող, շենքը կառուցելու տարածք և քար²⁵: Զավարյանը երազում էր մարդու ֆիզիկական, մտավոր և բարոյական հատկությունների «անսահման կերպով»²⁶ ներդաշնակ զարգացումը, որն անհնար էր առանց համապատասխան բարենպաստ պայմանների ստեղծման: Զավարյանը վստահեցնում էր. «**Բոլոր մարդոց, բոլոր անհատների կատարելագործումը – առանց դասի, լեզուի խտրության – բնութեան գծած սահմանների մէջ կրնայ տեղի ունենալ զարգացման հաւասար նպաստաւոր պայմաններ ստեղծելով**»²⁷: Նրա կրթական բոլոր կոնկրետ ծրագրերը, այդ թվում նաև գյուղերում տարրական գյուղատնտեսական դպրոցներ բացելը միտված էին մարդու կատարելագործման համար հավասար պայմաններ ստեղծելուն: Մակայն քաղաքական վայրիվերումներով լի դարաշրջանը այդ երազանքն էլ անկատար թողեց:

Հասարակության մեջ **կնոջ դերի ընկալման հարցում նույնպես երկու լոռեցիները համախոհ էին**: Երկուսն էլ չէին հանդուրժում տգիտության խավարում խարխափող գյուղերում կնոջ ծանր վիճակը, որը զուգորդվում էր տղամարդկանց բռնություններով, միջավայրի անտարբերությամբ և կնոջ ազատության նկատմամբ եկեղեցու անհանդուրժող վերաբերմունքի հետ:

Կնոջ դերի մասին թումանյանական ընկալումները բազմիցս արտահայտվել են նրա գրական և գեղարվեստական ժառանգության մեջ: Կինը բնության ամենակատարյալ արտահայտությունն է, ամենամեծ գեղեցկությունն ու պոեզիան. «Ճշմարիտ, – գրում է Թումանյանը, – միթե գեղեցիկ կնոջից ավելի սրտառուչ երգ կա կամ առաքինի մարդուց ավելի վաեմ բանաստեղծություն»²⁸: Շրջապատում տեսնելով մարդկային վեռ ու գեղեցիկ հատկանիշների կորուստը՝ գրողը հաճախ է կանգնել թշվառության ու ստրկական վիճակի հետևանքով կնոջ նկարագրի աղճատման փաստերի դեմ հանդիման: Մակայն թե՛ հիացմունքը, թե՛ հիապոթափությունը նրա պատկերացումներում մազաչափ անգամ չեն նսեմացրել կնոջ դերի ու նշանակության ընկալումը: Դեռ երիտասարդ Թումանյանը իր հրապարակախոսական կյանքի արշալույսին՝ 1894-ին, գրում էր. «Կնոջ վիճակը

23 Վարվառա Մելիք-Հայկազյանը Թումանյանի մտերիմ բարեկամուհիներից մեկի՝ մանկական երկերի ու ճամփորդական տպավորությունների հեղինակ Հեղինե Մելիք-Հայկազյանի մայրն է (1850–20.09. 1910):

24 Մ.Հովհաննիսյան, Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության պատմությունը (1900–1912), Եր., 2012, «Գրական էտալոն» հրատ., էջ 180:

25 «Միմոն Զավարեան», հ.Ա., էջ 417: Տե՛ս նաև՝ Խաչ.Գիլանյան, Զավարեան դպրոցը, «Հորիզոն» օրաթերթ, Թիֆլիս, 1913, հոկտեմբերի 15:

26 «Միմոն Զավարեան», հտ. Գ., էջ 630:

27 Նույն տեղում:

28 Թումանյան, ԵԼԺ, հտ. 9, էջ 233:

հայտնում, ցույց է տալիս ինչպես անհատի, այնպես էլ հասարակության աշխարհայեցողության սահմանը, զարգացման աստիճանը»²⁹: Կոնցն արհամարհող, նրան իբրև «առաջին մեղքի պատճառ», «դժոխքի դուռը» հասցնող, բոլոր սրբերից ու սրբություններից նզովված էակ անվանելը, անարգանքի պոնիին գամելը 25-ամյա պոետը ներկայացնում էր որպես քրիստոնեության բարձր գաղափարն այլանդակող տգետ հոգևորականների քարոզի հետևանք: Նա ցավ էր զգում հատկապես գավառներում ծեծված ու նախատված, անարգանքի մշուշով պատված կանանց ճակատագրի համար և այդպիսիներին լիարժեք կին չէր համարում. «Մա դեռ մայրը, կինը, կյանքի ընկերը չի»³⁰: Այս հարցում էլ Թումանյանին լավատեսությունը չէր լքում: 1919 թ. ապրիլի 1-ին նա ասում էր. «Կինը չի ապրում հիմա. Նա պիտի փոխվի, նոր կինը պիտի գա – էն կլասիկ, ազատ կինը պիտի գա իր կլասիկ գեղեցկություններով ու առողջությունով, նաև իր հոգեկան արժանիքներով ու կարողությամբ»³¹:

Կանանց հարցի շուրջ իր առաջադիմական հայացքներով բանաստեղծ ընկերոջից ետ չէր մնում նաև Զավարյանը: Ավելին, եթե Թումանյանը արձանագրում էր փաստը, իր մտահոգությունն արտահայտում, երագում ու նաև հավատում կնոջ վիճակի դրական փոփոխություններին, ապա Զավարյանն առավել գործնական հիմքերի վրա էր դնում խնդիրը և վիճակից դուրս գալու կոնկրետ քայլեր էր մատնանշում: Չանտեսելով օրենքների բարելավման անհրաժեշտությունը՝ նա ավելի նախընտրում ու կարևորում էր մարդկանց գիտակցության և հոգեբանության վրա ազդելու, սովորությունների ու նախապաշարումների դեմ առավել տևական, «ոչ հեղափոխական», ոչ կտրուկ միջոցներով, հատկապես կրթության ոլորտում հավասար իրավունքներ ապահովելով՝ կանանց հարցի «բարեշրջմանը» հասնելու ուղին:

1909 թ. նա Ակնունու (Խաչատուր Մալումյան), նրա կնոջ՝ Սաթենիկի և Ռուբենի հետ զրույցի է բռնվում կանանց հարցի շուրջ և մասնավորապես ասում է. «Մարդկությունը իր ուժի, տնտեսութան, բարոյականի և մտքի կէտը կորցնում է. քանի իր կէտը անհաւասար դրութեան մէջ է դրուած: Ի հարկէ, մարդկութիւնը անկարող է ազատագրուիլ ստրկութիւնից, քանի կին դասակարգը. իր արմատը. կը մնայ ստրկութեան մէջ. թեկուզ այդ լինի կամովին և փոխադարձ համամտութեամբ... Ամէն մի ժողովուրդ, նայած իր բարոյական և ընկերային մակարդակին, օրէնքներ և շղթաներ է դրած և կարգ հաստատած: Այդ կարգը հիմնուած չէ միայն օրէնքի ուժի վրայ, այլ բարոյական և աւանդական սովորութեանց վրայ: Նրա խարիսխը նիւթական, օրինական պարտադրութիւնները չեն միայն, այլ աւելի դաստիարակչական և կրօնական հիմունքները: Կարգը չի վերաբերում միայն այր մարդու և կնոջ փոխադարձ յարաբերութիւններին, այլև հանդերձեալ կեանքին և գալիք սերունդին...Ընտանիքի, կանանց ու տղամարդկանց յարաբերութիւնների բարելաման համար...**ոչ թէ յեղափոխութիւն, այլ բարեշրջում անհրաժեշտ է:** Մի համարէք ասածս հակայեղափոխութիւն,

29 Նույն տեղում, հտ. 6, էջ 47:

30 Նույն տեղում, հտ. 6, էջ 48:

31 Թումանյան Նվարդ, Հուշեր և զրույցներ, Եր., «Լույս» հրատ., 1987, էջ 199:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) ԳՐԱԻՒՄ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

քանի որ ձեր ուզածը իմ ուզածն է: Նպատակին հասնելու կերպն է մեր տարբերությունը: Ի հարկէ, կարելի է մէկ հարուածով ապօրինի հռչակել բոլոր նախապաշարումները, սովորությունները, կրօնական և այլ շղթաները, որոնց վրայ խարսխուած է կանանց գերությունը: Բայց կարելի է այդ բոլորը արմատախիլ անել մարդկութեան հոգուց: Այդ հարցական է... Ինչ նոր կարգեր պէտք է ստեղծել փոխարինելու համար եղած կարգերը: Այդ դեռ ևս չենք գիտեր: Բայց գիտենք մի բան. եթէ բացակայի օրենքը, կարգը ինչ բնույթ էլ ունենայ, երկու սեռերը կը դառնան անասուն, առանց պարտաւորութեանց. ինչ որ աւելի վատ է, քան անհաւասարությունը:...

Միայն այն ասեմ, թէ կանանց ազատութեան ճանապարհն է՝ **սպանել կանանց ստորագնահատման և տղամարդկանց գերզնահատման յաւակնությունները: Հաւասար կրթություն՝ բոլոր ճիւղերի մէջ:** Սեռական հաճոյքը պէտք չէ դառնայ նպատակ, այլ պէտք է այդ հաճոյքին հետևող ընտանիքի կազմութիւնը հաստատել **երկու սեռերի հաւասար իրաւունքներով**»³² (ընդգծումը մերն է – Ս.Հ):

Թումանյանն ու Զավարյանը գուցէ ավելի մտերիմ չէին, ինչպէս Թումանյանն ու Իսահակյանը, Շանթը կամ Նիկոլ Աղբալյանը, ովքեր «Վերնատան» անդամներն էին և մինչև կյանքի վերջ Ամենայն Հայոց բանաստեղծի հետ կապված էին հարազատ, ասես արյունակցական կապերով: Պատճառներից մեկը թերևս այն էր, որ վերջիններս բանաստեղծի համար նաև գրական ընկերներ էին, ուստիև շատ ավելի ժամանակ են միմյանց կողքին ապրել, իսկ Զավարյանը Կովկասում շատ ավելի քիչ է եղել:

Միամանքոն, ով հիացած էր Զավարյանի անձով, հաճախ է վիճել նրա հետ գրական հարցերի շուրջ, քանի որ Զավարյանի կատակով ասված խոսքերով նա (Միամանքոն) «Ինձ (Զավարյանին) համարում էր մի անքաղաքակիրթ մարդ, որ բանաստեղծությունից ոչինչ չի հասկանում...»³³: Գասպար Իփեկյանի³⁴ հուշերում նկարագրվում է այդպիսի մի վեճ Ղազարոս Աղայանի ստեղծագործության շուրջ, երբ Զավարյանը կարծիք է հայտնել, թե հայերենով գրված ամենագեղեցիկ բանաստեղծությունը «Քյոր Օղլին» է, Միամանքոն էլ Զավարյանի կատակով ասված խոսքերից՝ «մի ամբողջ շաբաթ ինձ հետ չէր խօսում»³⁵:

Մի էական տարբերություն էլ կար երկու հայրենակիցների միջև, որը նրանց առաջին հայացքից դարձնում էր հակապատկերներ: Թումանյանն իր անսահման կենսասիրտությամբ աշխատում էր համադրել կյանքի վայելքն ու դժվարությունները՝ վշտին ու տառապանքին հակադրելով, իր խորին համոզմամբ, կյանքում ամենից դժվարը՝ **ուրախ ապրելու զգացումը**, իսկ Զավարյանը, Միքայել Վարանդյանի խոսքերով, թեև «Ասայկլետ չէր բնավորութեամբ, ճգնաւոր չէր խառնուածքով»³⁶, սակայն ապրում էր՝

32 «Միման Զաւարեան», հտ. Բ., էջ 582: Տե՛ս նաև՝ **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հտ. Զ, Պէյրուք, 1977, էջ 311-314:

33 «Միման Զաւարեան», հտ. Ա., էջ 672: Տե՛ս նաև՝ **Գասպար Իփեկեան**, Իմ առաջին հանդիպումս Միման Զաւարեանի հետ, «Հայրենիք» ամսագիր, Պոսթրն, 1951, մարտ, էջ 30-32:

34 **Իփեկեան Գասպար**՝ Նուրիջանի քննադատ, գրական-մշակութային գործիչ - 06.01.1883, Մամոն 27. 03. 1952, Բեյրութ:

35 **Գասպար Իփեկեան**, Իմ առաջին հանդիպումս Միման Զաւարեանի հետ, «Միման Զաւարեան», հտ. Ա., էջ 672:

36 «Միման Զաւարեան», հտ. Ա., էջ 45:

«ձգնութեան ծանր խաչը շալակած, յօժարակամ հրաժարուելով կեանքի վայելքներէն, վանագի հայրենի իրականութեան մէջ կը տեսնէր միայն թշուառութիւն»³⁷:

Ուրախ ապրելը գրողի համար բարձր ճաշակի խնդիր էր և կապ չուներ ապրուստի ու նյութականի հետ: Ինչուքն ու թամադայությունը, կատակներն ու կենացները յուրօրինակ պայքարի ձևեր էին մարդկային կյանքի անողորմության, կյանքի անցողիկության, բնության հավերժության մէջ մարդու մահկանացու և աշխարհում հյուր լինելու ունայնության դեմ: Նույնիսկ 1906 թ. ամռանը՝ հայ-թաթարական սուր բախումների շրջանում, գիշերով, երբ ամենքը քնած էին, Թումանյանը համագյուղացիներին քնից հանում ու Դդի ուսին խնջույք է կազմակերպում և նրանց զարմանքին հակադարձում է. «Ես պատկեցի քնելու: Հանկարծ միտս ընկավ մահը. ինքս ինձ ասի՝ ինչ ենք թողնելու էս աշխարհում...Ո՛վ գիտի, մեզանից քանիսը սաղ կլինի էկող էս ժամանակ»³⁸: Այսպես էր մտածում նույն օրերին մահվան աչքերին նայող, ամեն օր կյանքը վտանգի ենթարկող, իր ազգի նահապետ ու խաղաղության զինվոր բանաստեղծը, ով **շոայլ էր ամեն ինչում ու ամենից շատ սիրում էր առատը**: Պատահական չէ, որ «Իմ երգը» խորագիրն ունի այն քերթվածը, որտեղ 1918 թ. սոսկալի տարում պոետն ի լուր աշխարհի ազդարարում է.

**Գանձեր ունեմ անտակ, անծեր,
Ես հարուստ եմ, ջան, ես հարուստ,
...Սիրտս է առատ, լեն ու ազատ.
Ինչքան էլ որ բաշխեմ ձրրի –
Մերն անվերջ է, բարին՝ անհաս**³⁹:

Մինչդեռ ինչպես ժամանակակիցներից ու մտերիմներից շատ շատերի, այնպես էլ Արտաշես Յաղուայանի ներկայացմամբ՝ Զավարյանին բնորոշ էր «ծայրահեղ խստակեացությունն ու ժուժկալութիւնը... Օրերով ան կը քալէր՝ քեզ ալ հետը քալեցնելով, որպէսզի ազգին դրամը խնայուի... Ուրացում մը կար Զաւարեանի մէջ իր անձին դէմ...»⁴⁰: Ռուբեն Դարբինյանը հավելում է. «Դրամական խնդիրներու մէջ հիւանդութեան աստիճան բժախնդիր էր... Ընկերները գիտէին անոր արտառոց խստապահանջութիւնը ...սակավապետ ու խստակրօն... Զաւարեանի աչքին դրամը գայթակղեցնող, փչացնող, այլասերող բան մըն էր, որմէ մարդ որքան հեռու մնար, այնքան լաւ»⁴¹:

Միամանթոն Ամերիկա ծանապարհվելիս կայարանում նկատելով Զավարյանին և անհանգստանալով նրա՝ դրամը չխնայելու անխուսափելի նկատողությունից՝ անմիջապես երկրորդ կարգի վագոնից տեղափոխվում է երրորդ կարգի վագոն:

Ամենից առաջ Զավարյանը խիստ էր իր նկատմամբ: Պոլսում ՀՅԴ 6-րդ

37 Նույն տեղում, էջ 45:

38 ԹԺՀ, էջ 245:

39 Թումանյան, ԵԼԺ, հտ. 1, եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 298:

40 «Միմոն Զաւարեան», հտ. Ա., էջ 694, տե՛ս նաև՝ Արտաշես Յաղուայան, Ս. Զաւարեան Տարօնի մէջ (Հատուածներ), «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1951, փետրվար-հունիս:

41 Նույն տեղում, էջ 677, 680, 681:

Ընդհանուր ժողովում⁴² 1911 թ., որոշվել էր, որ երկու այլ կուսակիցների՝ Գ.Խաժակի և Վահայի (Ա. Վռամյան) հետ Զավարյանը ամսական պետք է ստանար 6 ոսկի աշխատավարձ, որը հազիվ կբավարարեր համեստ ապրելու, մինչդեռ նա հրաժարվել էր դրանից և Եսայան վարժարանում դասավանդում ու ստանում էր ընդամենը երկու ոսկի, որով կարելի էր միայն կիսաքաղց գոյություն քարշ տալ: Հատուկ հրավիրված նիստում բյուրոյի ընկերները փորձում են պարտադրել ժողովի որոշումը, սակայն չեն հաջողում⁴³: Իսկ «Մշակը» Զավարյանի մահվանից հետո արձանագրեց, որ նա ապրում էր ամսական 80 ֆրանկով (29ռ. 60կ.)՝ կես կուշտ, կես քաղցած⁴⁴:

Տարբեր էին նաև արտաքին քաղաքական հարցերի, մանավանդ Ռուսաստանի քաղաքականության հեռանկարի նկատմամբ երկու գործիչների մտածելակերպը: Թումանյանի ռուսական կողմնորոշման մասին խոսվել է բազմիցս: Այն արտահայտվել է ինչպես նրա՝ Հայկական հարցին նվիրված ուսումնասիրություններում, հրապարակախոսական հոդվածներում, նամակներում, ժամանակակիցների վկայություններում, այնպես էլ գրականագիտական երկերում: Անվանի պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի՝ բանաստեղծի մասին գրված հուշերում կա ՀՅԴ մտավորական գործիչների հանդեպ Թումանյանի ցուցաբերած վերաբերմունքը խեղաթյուրող մի փաստ⁴⁵:

42 Ռուբէն Դարբինյանի վկայությամբ («Կեանքիս գրքէն», Պէյրոս, 1972, էջ 126) «Բիւրոյի միս ընկերները որոշեցին Զաւարեանի հետ շատ լուրջ խօսակցութիւն մը ունենալ և պարտադրել իրեն, որ անսպասան ընդունէր Ընդհանուր ժողովէն սահմանուած ամսականը: Խօսակցութիւնը այդ մասին տեղի էր ունեցած Բիւրոյի մէկ նիստին առէն, քանի մը դուրսի ընկերներու մասնակցութեամբ» (Տէն նաև՝ «Միմոն Զաւարեան», Ա հ., էջ 677):

43 «Միմոն Զաւարեան», հտ. Ա., էջ 678: Տէն նաև՝ **Ռուբէն Դարբինեան**, Երկեր, Ա հատոր, «Կեանքիս գրքէն», Պէյրոս, 1972, էջ 125-130: Զավարյանն իր համաձայնությունը պատրաստ էր տալ միայն այն դեպքում, եթե երեքի համար նախատեսված 18 ոսկին կրճատվեր 12-ի: «Միմոն Զաւարեան», հ. Ա., էջ 677: Տէն նաև՝ **Ռ. Դարբինյան**, Երկեր, Ա. հատոր, «Կեանքիս գրքէն», Պէյրոս, 1972, էջ 125-130:

44 «Մշակ», Թիֆլիս, 1913, նոյեմբերի 14: Տէն նաև՝ «Միմոն Զաւարեան», հտ. Ա, էջ 613:

45 Ըստ հուշագրի՝ Թումանյանը մերժում է Թիֆլիս հեռացած դաշնակցական պաշտոնյաներից ոմանց խնդրանքը՝ «Տոլստոյի նման» պաշտպան կանգնելու ՀՅԴ-ին և հեռագիր հղելու Միսկվա՝ անձամբ Լենինին՝ դաշնակցականների և նրանց ընտանիքների նկատմամբ ծայր առած քաղաքական հետապնդումների դադարեցնելու նպատակով: Պատմաբան Ա. Հովհաննիսյանը պոետին վերագրում է, այն էլ ուղղակի խոսքով, մտքեր, որոնք վստահ ենք, որ նա չի արտահայտել կամ ասել է բոլորովին այլ համատեքստում (տե՛ս ԹԺՀ, էջ 668): Ինքը՝ Թումանյանը, 1920 թ. դեկտեմբերի 18-ին և 25-ին իր զավակներին հասցեագրած նամակում գրում է. «Որովհետև ...հայտնի եմ իբրև համոզված ռուսֆիլ, էդ ամենի վրա հենվելով **մի դիմում եմ անում Ռևկովին և Լենինին (էս էլ ուրիշ)**, ինարկե, ընդհանուր շահերն ունենալով ի նկատի» (ընդգծումը մերն է-Ս.Հ.) (Թումանյան, ԵԼԺ, հտ. 10, էջ 372): Ավելի հավանական է, որ ՀՅԴ անդամները նման խնդրանքով չեն դիմել բանաստեղծին, ինչպես պնդում է Ա.Հովհաննիսյանը, և Թումանյանը այդ երկու նամակները գրել է իր նախաձեռնությամբ: Բացի Թումանյանի վերաբերյալ վկայությունից, անձամբ կարող եմ հավաստել, որ Թումանյանի կրտսեր դուստրը՝ Թամար Թումանյանը, ջանք չէր խնայում այդ նամակը հայտնաբերելու համար, և բարեկամներին, թումանյանագետներին ու Թումանյանի թանգարանից Միսկվա գործուղվող յուրաքանչյուր աշխատակցի խնդրում էր Լենինի անձնական արխիվում փնտրել այդ նամակը, ընդ որում, համոզված էր, որ այդ նամակում եղել էր նաև Հայաստանի սահմանների արդարացի բաժանման խնդրանք: Սակայն որոնումները արդյունք չովեցին, քանի որ անձամբ Լենինին ուղղված նամակները չէին տրամադրվել հայ ուսումնասիրողներին: Իսկ այն, որ Խորհրդային համակարգի պարտադրանքով Թումանյան - ՀՅԴ հարաբերությունները ոչ միայն Աշոտ Հովհաննիսյանի, այլև շատ հուշագիրների կողմից ներկայացվել են միակողմանի և անավարձված կամ հորինվել են առանց որևէ վավերական հիմքի, ամենից առաջ հաստատում են հենց ՀՅԴ գործիչները: Ս.Վրացյանը շնորհակալությամբ ու երախտիքի զգացումով է հիշում

Գրողը միմյանցից զատում էր **երկու Ռուսաստան**. մեկը՝ իշխանությունների, հատկապես ներքին գործերի նախարարության, գոլիցիյան Ռուսաստանն էր, որը փակում էր հայկական դպրոցները, հալածում էր հայ առաջադեմ մտավորականությանը և ազգային յուրաքանչյուր պայքար, անվերջ խոչընդոտում էր հայության տնտեսական ու քաղաքական զարգացմանը, մյուսը՝ մշակութային և արտաքին գործերի Ռուսաստանը, որի գրականությամբ դաստիարակվում էր Կովկասի հայությունը, և որի հրամանով ռուս զինվորը կռվում էր հայ կամավորի հետ, քանի որ կար շահերի որոշակի ընդհանրություն: Թումանյանը մերժում ու դատապարտում էր առաջինը և սիրում ու ողջունում երկրորդը: Մշտապես առաջնորդվում էր «Մոտիկ հարևանը լավ է, քան հեռու բարեկամը» սկզբունքով: Դարերի փորձը նրան հուշում էր, որ Արևմուտքից փրկություն աղերսելն անիմաստ է, որ մեծ պետությունների շահերի մշտական բախումը հայոց հողի վրա անվերջանալի աղետների աղբյուր է, իսկ Թուրքիան սպառնում է հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը: Նա համոզված էր նաև, որ թուրքը երբեք չի կարողացել և չի կարող հաղթել ռուսին. «Ռուսաստանը զարկել է, զարկում է և կզարկի Թուրքիային, մինչև ուժասպառ չանի նրան»⁴⁶: Մանավանդ 1915 թ. ցեղասպանությունից հետո բանաստեղծը Ռուսաստանից անկախացման մեջ հեռանկար չէր տեսնում: Իսկ երբ վտանգված էր ազգի ֆիզիկական գոյությունը, և պահն օրհասական էր, Թումանյանը՝ ամենից ազգային, ամենահայ, ամենաքաջ բանաստեղծը, կարող էր խոսել նույնիսկ անկախության դեմ. «Այո՛, անկախությունը լավ բան է: Դրա մասին չխոսենք: Բայց եթե ինքը՝ հայ ժողովուրդը... Անկարող է իր անկախությունը պաշտպանելու... ինչ պետք է անես: Չենք ուզում:

Եթե անկախությունը թոկ է դառնալու հայությունը խեղդելու համար – չենք ուզում:

Եթե անկախ Հայաստանը դառնալու է մի փոքրիկ վանդակ, ամեն կողմից դռները փակած, և միակ դուռն էլ, որ բաց է, բաց է տաճիկ ասկյարի համար, չենք ուզում»⁴⁷:

Քաղաքական հարցերում Թումանյանը առաջնորդվում էր ոչ թե քաղաքական կամ մասնագիտական հմտություններով, այլ սրտով ու բանականությամբ, իր ժողովրդի պատմության իմացության և իր ժամանակի քաղաքական կյանքի փորձով: Եթե նույնիսկ Թումանյանը սխալվեր որոշ հարցերում, ապա դա հասկանալի կլիներ մի մեծ մտածողի ու գործչի համար, որը նախ և առաջ բանաստեղծ էր և գեղարվեստի մարդ, ում համար գլխավորը ժողովրդի գոյապահպանության, իր բառերով՝ «գլխապահության կամ ինքնապաշտպանության»⁴⁸ խնդիրն էր:

Թումանյանի գործունեությունը ՀՅԴ-ի Կովկասը թողնելուց հետո. «Նա աշխատեց ամեն կերպ թեթևացնել հեռացած գործիչների ու մտավորականների ընտանիքների դրությունը: Անձնապես ես այդ տեսակետից առանձին երախտիք ունիմ նրա այն ազնիվ, կարելի է ասել հայրական վերաբերումի համար, որ նա ցույց է տվել դեպի իմ ընտանիքը: Եվ այժմ տարագրության մեջ գտնվողներից շատերը ջերմ երախտագիտությամբ են խոսում նրա՝ այդ օրերի մարդկային գործերի մասին» (ընդգծումը մերն է–Ս.Լ.): Տե՛ս «Հայրենիք», անսագիր, Պոսթըն, 1923, N 10, էջ 76:

46 Թումանյան, ԵԼԺ, հատ. 7, էջ 21:

47 Նույն տեղում, հատ. 8, էջ 451:

48 Նույն տեղում, էջ 176:

Իսկ Զավարյանը չէր հավատում Ռուսաստանի «փրկարար դերին»: Ավելին՝ Ռուսաստանից հայ ժողովրդի շահերը ոտնահարող որոշակի գործողություններ էր կանխագգում: «Հայրենիք» ամսագրում 1950 թ. փետրվարին լույս տեսած «Միմոն Զաւարեանի մարգարէութիւնը» խմբագրականում ներկայացված են իր մահվան նախօրեին քաղաքական աղետը կանխագգացող Զավարյանի խոսքերը. «Ոչ մեր պարտականությունն է և ոչ ալ մեր կարողութիւնը կը պատէ, որ տապալենք ռուսական ռէակսիոնը: Բայց մեր պարտականութիւնն է և մեր կարողութիւնը կը պատէ, որ հայութեան անձնատուութեան առաջն առնենք: Ռուսական նպատակները չեն սահմանաւորուիր միայն Անդրկովկասը հլու հպատակ դարձնելը, այլ և անոր հարևան պետութիւնները իր հակակշիռին ենթարկելը, որպէսզի անոնք ևս չեղափոխուին և մնան յետամնաց, ինչպէս որ ինքն է...**Լաւ հասկըցէք, երբ Անդրկովկասը մնայ առանց Գաշնակցութեան հակակշիռին, երբ մեզ համակիր գրողները, հասարակական դիրք ունեցողները, հաւատացեալ մարտիկները կը լքեն իրենց դիրքերը և այստեղ կը ապաստանին, անօնք անգիտակցօրէն ցարական նպատակներուն կը ծառայեն: Անոնց տեղը պիտի բռնեն ցարի վարձկան գործակալները: Մեր հոգևորականութիւնը երգիչը պիտի դառնայ ցարական նպատակներուն: Մեր այնտեղի մամուլը փաստաբանը պիտի դառնայ ցարին: Մեր դպրոցները պիտի դառնան դաստիարակիչը ռուսական մեծութեան: Մեր մարտիկները պիտի դառնան անոր որսկան շները և մեր զանգուածը պիտի ծծուի սպունգի նման ռուսական նպատակներով: Եւ այն ժամանակ մնաս բարև պէտք է ըսել հայութեան շահերուն և նպատակներուն (ընդգծումը մերն է – Ս.Ը.)»⁴⁹:**

Թվում է, թե ահագանգելով Ռուսաստանից եկող վտանգի մասին՝ Զավարյանը հույսը պետք է դներ «սահմանադրական» Թուրքիայի վրա: Մակայն նա բավարար քաղաքական հասունություն և մտածողության ազատություն ուներ առողջ դատելու համար: Զավարյանը հայտարարում էր, որ ոչ Թուրքիան, ոչ էլ Պարսկաստանը չեն կարող հենարան լինել հայ ժողովրդին, քանի որ «Անոնք տաշեղներ են, շատ-շատ նաւակներ, յառաջացող յորձանքին առջև: Այդ նաւակներուն մէջ մենք տեղ ալ չունինք»⁵⁰: Ավելին, նա զգում էր նաև, որ Թուրքիան «Ատանայի նման դէպքերով», այսինքն՝ ջարդով ու կոտորածով հուսահատության կմատնի հայությանը, որից կօգտվի Ռուսաստանը և «փրկութեան լաստ» կուղարկի Էջմիածին՝ կաթողիկոսին և «Մշակի» սոցիալ-դեմոկրատներին. «Ատոր նշանները կը երևնան արդէն Թիֆլիսի մէջ: Եւ մեր շարքերէն թեթևամիտները պիտի թռչեն այդ լաստին վրայ: Իսկ անոնք, որ կը գիտակցին այդ լաստերուն նենգութիւնը, մէկիկ մէկիկ պիտի ընտրուին ու փձացուին: Եւ չգիտեմ, թէ անկէ վերջը ինչ պիտի դառնայ հայութեան ճակատագիրը: Գուցէ ան դադրի իսկ գոյութիւն ունենալէ»⁵¹:

Զավարյանն իր հույսը չէր կապում և ոչ մի տերության հետ: Նա կոչ չէր անում դուրս գալ և մասնակցել ցարիզմի դեմ պայքարին, որի տապալումը

49 «Միմոն Զաւարեան», հտ. Ա., էջ 185-186: Տե՛ս նաև՝ «Միմոն Զաւարեանի մարգարէութիւնը», «Հայրենիք», ամսագիր, Պոսթըն, 1950, փետրուար:

50 Նույն տեղում, էջ 186:

51 Նույն տեղում:

վեր էր հայության ուժից: Դրա փոխարեն նա փորձում էր ամեն գնով ամրացնել ՀՅԴ-ն Կովկասում, որպեսզի տեղի հայությունը չմնա «անգլուխ» և չհանձնվի ու չստրկանա Ռուսական կայսրությանը: Իբրև հարցի լուծում առաջարկում էր վտանգը տեսնելը և ինքնախաբեությամբ չտարվելը: Կյանքի վերջին շրջանում նա, կարծես մարգարեանալով, համոզված պնդում էր. «Վտանգը, չարիքը տեսնելը և ինքն իրեն չխաբելը արդեն յաջողութեան երեք քառորդն է, որ և կը ձղէ քու ընելիքը: Մեր ընելիքը պարզ է այդ վտանգին հանդէպ: Մենք ոչ թէ Դոնկիշոտ պէտք է դառնանք, այլ միայն մեր կազմակերպութեան ոյժը և դիրքերը պէտք է պահենք Անդրկովկասի մէջ: Այդ անհրաժեշտ է հայութեան հոգեկան տեղատուութեան շրջանին՝ անձնատուութեան առաջն առնելու համար: Երբ այդ եղաւ, մենք ոչ մէկ վնասի ենթակայ չենք: Իսկ երբ այսպէս անգլուխ մնայ Կովկասը, հայութիւնը կը դառնայ չարիքի աղբիւր, գործիք մը ցարական ոէակսիոնի ձեռքին: Եւ այդ պարագային՝ չպիտի կրնանք Թուրքիոյ, Պարսից և այլ երկիրներու հայերը փրկել սայթաքումներէ: Այդ պարագային անոնք պիտի լծուին ռուսական սայլին, և ամէնքը մէկէն կորուստի պիտի երթան (ընդգծումը մերն է – Ս.Լ.)»⁵²:

Այնուամենայնիվ, անկախ մտածելակերպի ու բնավորության տարբերություններից և հայությանը բաժին ընկած ճակատագրի հանդեպ մտեցումների առանձնահատկություններից, երկու ազնվագույն գործիչները միասին տառապեցին հարազատ ժողովրդի հանրային-քաղաքական կյանքի բազում հոգսերով և մերթընդմերթ հանդիպեցին կյանքի խաչմերուկներում՝ իրենց անձնվեր գործունեության ճանապարհներին:

3. «Հայոց հրատարակչական ընկերության» ժողովներում

1894 թվականին բանաստեղծը բազմիցս ընկերական ու գործնական հանդիպումներ է ունեցել Ս.Ջավարյանի հետ «Հայոց հրատարակչական ընկերության» ժողովներում: Այդ հանդիպումներից մեկը տեղի է ունեցել **1894 թ. մարտի 26-ին, երբ նրանք երկուսով մասնակցում էին «Հայոց Հրատարակչական ընկերության»՝ 1893 թ. գործունեության հաշվետու ընդհանուր ժողովին**⁵³: Թարգմանական և ազգային գրականության առաջնության հարցի շուրջ ծագած սուր բանավեճում նրանք կողք կողքի

52 Նույն տեղում:

53 «Հայոց հրատարակչական ընկերությունը» սկզբում կոչվել է «Թիֆլիսի ընկերություն հայերեն գրքերի հրատարակության»: 1889 թ. առաջնահերթ է դառնում նրա գործունեության բարելավման խնդիրը, քանի որ 10 տարվա ընթացքում ընկերությունը հրատարակել էր ընդամենը 22 գիրք: Այդ պատճառով շատ երիտասարդներ այդ տարի, վճարելով 6 ռուբլի, դառնում են անդամ՝ հատկապես ընտրություններին մասնակցելու, վարչության կազմը թարմացնելու, ավելի ձեռներեց ու գործունյա աշխատողներ ընտրելու համար: 1889 թ. ապրիլի 2-ին ընդհանուր ժողովում վարչության ատենապետ է ընտրվում Փիլիպոս Վարդանյանը («Մուրճ», Թիֆլիս, N 4, էջ 676, N 5, էջ 799, 1890, N 3, էջ 440): Այդ երիտասարդների թվում էր Թումանյանը: Ան.Արովյանը վկայում է. «Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությունը մի կերպ քարջ էր տալիս իր անգույն գոյությունը: Որպեսզի քնած վիճակից սթափվեր և իր իսկական կոչմանը ծառայեր, գրական շրջաններում միտք արծարծվեց զարկ տալ ընկերության գործունեությանը: Հովհաննեսն ու ես էլ, պարտքով դրամ ձարելով ու անդամագրվելով, մասնակցում էինք ժողովներին: Հայ մտավորականների ձայները խոր տպավորություն էին թողնում մեր մատաղ արտերի վրա» (ԹԺՀ, էջ 229):

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

էին, նույն «բարիկաղում»: Հաշվետու տարում Կովկասի «Հայոց Հրատարակչական ընկերության» տպագրած 12 գրքերից 5-ը թարգմանություններ էին: Հեղինակային և թարգմանական գործերի համար վարձատրությունը գրեթե նույնն էր, ինչը չէր կարող նպաստել գրական նոր երկերի ստեղծմանը⁵⁴: 25-ամյա Թումանյանը դժգոհում էր ի հաշիվ ազգային գրականության զարգացման «թարգմանական գրականության» հեղեղի դեմ, իսկ Զավարյանը կրքոտ պաշտպանում էր նրան՝ առաջնության դասինն տալով հայ գրականությանը և հայ հեղինակների երկերին: Նրանք երկուսն էլ այն կարծիքին էին, որ **չի կարելի թարգմանությունը խրախուսել ավելի, քան ինքնուրույն գրականությունը, և անհրաժեշտ է զանազանեղ գրողի աշխատանքը թարգմանչի աշխատանքից:**

Բանավեճի ընթացքում Զավարյանը պաշտպանում է Թումանյանի այն առաջարկը, որ ընկերությունը ինքնուրույն գրականության հոնորարը գոնե երկու անգամ պետք է բարձրացնի և հանուն բանաստեղծի հակադրվում է Ավետիք Արախանյանին: Ինչպես փաստում է Ղազարոս Աղայանին ուղղված Թումանյանի նամակը, Զավարյանի ձայնը վճռորոշ է եղել, և Թումանյանին հանձնարարել են առաջարկությունը գրավոր ներկայացնել ընկերության վարչությանը՝ ընդհանուր ժողովում քննության առնելու համար⁵⁵: Ուստի նկատի ունենալով իր հակառակորդներին՝ բանաստեղծը գրում էր. «Այս մարդիկը ապացուցում են, որ ոչ մի զգացմունքով կապված չեն գրականության հետ, թեև հաճախ խոսում են նրա անունով. որովհետև հենց ժողովում էլ ուզում էին խեղդել այս խնդիրը, և կլիսեղդեին, եթե չլինեին Զավարյանի նման երիտասարդները: Եվ դրանք իրենց գրականության տերեր ու դատախազներ են համարում, և դրանք խմբագիրներ են, Արախանյանցի նման խմբագիրներ, որ այնքան է հասկանում գոնե գեղարվեստական գրականությունից, որքան բողջավելցի թարաքյանան Շոպենի սերենադը»⁵⁶:

1894 թ. մարտի 26-ի ժողովում վիճարանության առիթ է դառնում նաև մեկ այլ խնդիր՝ «լրացնել այն կրեդիտը, որ տրված է վարչությանը՝ գավառները գիրք ուղարկելու համար... և ձայների մեծամասնությամբ վճռվեց՝ վարչությանը տալ իրավունք ուղարկելու գավառները մինչև 12 000 գրքեր»⁵⁷: Բնական է, որ այստեղ էլ Զավարյանի ձայնը վճռորոշ է եղել, քանի որ դեռ 1891 թ. ապրիլին կայացած «Կովկասի հայոց հրատարակչական ընկերության» ընդհանուր ժողովում ՀՅԴ-ն հաղթել էր պահպանողականներին և ընտրությունների արդյունքում Փիլ. Վարդանյանի փոխարեն Ալ. Քալանթարին էր դարձրել ընկերության նախագահ⁵⁸:

ժամանակի պարբերականները լռություն են պահպանում Զավարյանի

54 Ղազարոս Աղայանին ուղղված մարտի 31-ի նամակում Թումանյանը գրում էր. «Ամեն մարդ ձեռնհաս լինելով թարգմանություն է անում և փող ստանում, և հեղինակը, որ կարող էր ինքնուրույն քան գրել, մտածում է՝ մի վեպ գրելու համար պետք է նստեմ, ամիսներով քարշարվեմ, որ ստանամ երթադրենք 100 ռուբլի, ավելի լավ չի լինի մի շաբաթ նստեմ՝ մի քան թարգմանեմ՝ ավելի շատ կտանամ: Այսպիսով, տուժում է ինքնուրույն գրականությունը» (Թումանյան, ԵԼԺ 9, էջ 132):

55 Թումանյան, ԵԼԺ., հատ. 9, էջ 132:

56 Նույն տեղում, էջ 133:

57 «Մշակ», Թիֆլիս, 1894, N 36, մարտի 29:

58 Տե՛ս Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն. ակունքներից մինչև 1895 թ. վերջերը, Եր., ՀՅ Դաշնակցության հրատ., 2006, էջ 271:

և Թումանյանի 1894 թ. մարտի 26-ի ելույթների մասին՝ փորձելով արդարացնել «Հրատարակչական ընկերության» որդեգրած քաղաքականությունը, մինչդեռ հանգամանորեն լուսաբանում են Խաչ. Մալումյանի⁵⁹ այդ օրվա ելույթը: Իր նման քայլով «Մշակը» վրդովեցրել էր երկու լռեցիներին⁶⁰: Հենց այդ թվականին էլ Թումանյանը գրում է իր «Բորչավում» հայտնի ակնարկը, որում մերժում էր հայրենասիրության այն տեսակը, երբ պոետին ավելի շատ «Վշտացնում է այն, թե ինչու են սև ամպեր կուտակվել Մասիսի ձյունափառ գագաթին – և նա շատ քիչ է նկատում կենդանի հայ գյուղացու ճակատի սև ամպերը: Հայոց հայրենասերն Արտազը, Տարոնն ավելի է սիրում, քան Արտազում և Տարոնում ապրող ժողովուրդը...Ահա մի քրմական, կույր, կեղծ, անխելք հայրենասիրություն: Մեր սգավորը, մեռելը թող արած, դագաղի համար է արտասվում (ընդգծումը մերն է – Ս.Ը.)»⁶¹:

Եվ եթե նկատի ունենանք հայրենասիրության մասին գրողի նման հավատամքը, ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի անկեղծ զրույցներ էին վարում միևնույն հայրենասնվեր գործին նվիրված հայրենակից զույգ ընկերները ազգային գրականության և մշակութային այլ խնդիրների մասին:

4. «Ծիածան» գաղտնի ընկերությունը

Երբ 1890-ականներին ցարական կառավարությունը փակում էր հայկական դպրոցները, Թիֆլիսում ստեղծվել էր «Ծիածան» երիտասարդական **գաղտնի ընկերությունը**: Նրա նպատակն էր հանրությանը ծանոթացնել հայ գրականությանն ու հայ ժողովրդի պատմությանը և այդ ճանապարհով նպաստել ազգային ինքնաձանաչողությանն ու ինքնագիտակցության բարձրացմանը, ազատասիրական գաղափարների վերելքին: Ընկերության առաջին նախագահը եղել է Ստեփան Շահումյանը, իսկ 1899 թ. Վահան Տերյանի եղբայրը՝ Արամ Տեր-Գրիգորյանը⁶², ով այն ժամանակ սովորում էր Թիֆլիսի Առաջին գիմնազիայում: Ընկերությունն ուներ «Ընկեր» խորագրով ձեռագիր կամ խմորատիպ ամսագիր:

Բացի գրական-գեղարվեստական գործունեությունից, «Ծիածանի» պարապմունքների ընթացքում քննարկվում էին նաև ժամանակի հասարակական միտքը հուզող սոցիալական և քաղաքական խնդիրներ, այդ թվում՝ Հայկական հարցը և ռուսական հեղափոխական շարժման ապագան: «Ծիածանի» աշակերտները, որոնց թիվը տատանվում էր 200-ից 500-ի սահմաններում, Թիֆլիսի պետական և ոչ պետական գրեթե բոլոր դպրոցների արական և իգական գիմնազիաների, ռեալական, տեխնիկական, այգեգործական, արհեստագործական, Ներսիսյան, Հովնանյան և Գայանյան

59 Մալումյան Խաչատուր Մկրտչի (Է. Ակունի), գրող, հրապարակախոս, 07.09.1865, Մեղրի – սպանվել է 1915-ին:

60 Տե՛ս «Մշակ», 1894, N 36, «Մուրճ», 1894, N 3, «Արձագանք», 1894, N 36: «Նոր Դարը» այդ ժողովին չի անդրադարձել:

61 Թումանյան, ԵԼԺ, հատ. 6, էջ 46:

62 Արամ Մուրջիասի Տեր-Գրիգորյան, մասնագիտությամբ իրավաբան, լրագրող, 21.05.1879, Ախալքալաքի գվ. գ. Գանձա-08.12.1925, Երևան:

դպրոցների աշակերտ-աշակերտուհիներն էին⁶³:

Թե՛ Զավարյանը և թե՛ Թումանյանը դասախոսություններ էին կարդում ընկերության «Մայր խմբին» հայ գրականության պատմությունից: Ընդ որում գրողը հաճախ լսարան էր դարձնում Բեհբության փողոցի վրա գտնվող իր տունը, այսինքն՝ «Վերնատունը»: Իր դասախոսություններում Թումանյանը բազմիցս անդրադառնում էր ազգային խնդիրների տեսական ընկալումներին. նրա պատկերացմամբ **հայկականության չափանիշը** ազգային ոգի ու նկարագիր ունենալն է, ժողովրդի ձակատագիրն ու ապագայի իդեալներն արտահայտելը: Միայն այդպիսի հայ բանաստեղծը կարող է դառնալ հայոց բանաստեղծ: Թումանյանը գրում էր. «**Հայոց բանաստեղծությունը այն խո չի, որի մեջ Հայաստանի և հայի անունը կա, որի մեջ ազգասիրության քարոզներ կան, Մասիս ու Արաքս կա, այլ այն, որի մեջ հայի հոգի կա, հայի շունչ կա, հայի վիշտ կա, հայի ուրախություն, հայի սովորություն, հայի զգացմունք: Հայ ասելով ես ժողովուրդ եմ հասկանում** (ընդգծումը մերն է – Ս.Ը.)»⁶⁴ :

«Ծիածանում» դասավանդող Ս.Զավարյանը գոլիցինյան խստագույն ռեժիմի պայմաններում՝ իշխանություններից գաղտնի, արծարծում էր ազգային խնդիրներին վերաբերող նույնաբնույթ հարցադրումներ: Մարգար Ավետիսյանի վկայությամբ՝ երկունս էլ «Մեծ սեր ու հեղինակություն էին վայելում ունկնդիր աշակերտության մեջ: Երկունս էլ ոչ թե սովորական ձառեր, դասախոսություններ էին կարդում, այլ պարապմունքներն անց էին կացնում հետաքրքիր զրույցներով, հոգևոր սնունդ մատուցում պատանիներին, որոշակի գիտելիքներ տալիս՝ անմոռանալի հետք թողնելով նոր կյանք մտնող պատանիների հիշողության մեջ»⁶⁵:

Հետագայում՝ Ս.Զավարյանի մասին իր հուշերում, Մարգար Ավետիսյանը նրա գաղտնի դասերին այցելող աշակերտների անունից գրում է. «Ազատ խոսքի կարոտ աշակերտությունը ետ ընկած փողոցների բորբոսուն խորճիթներում էր կարողանում հատ ու կտոր ճշմարտության խոսքեր լսել: Եվ փոքրիկ խմբակներով մենք վազում էինք մեկ Հալաբարի խորքերը, մեկ Վերայի մոռացուած գետնափոր նկուղները, մեկ Բոտանիքական ծործորները, որտեղ սրտներս լի ահով, ամէն փոքրիկ ձայնից լեղաձաք հոգով, մի ժամուայ դասախոսութեան էինք արժանանում»⁶⁶: Հուշագրի վկայությամբ՝ բազմաթիվ դասախոսներ հաջորդում էին միմյանց, սիրելի դառնում, սակայն հեռանալու հաջորդ օրն իսկ մոռացվում: Իսկ Զավարյանը այն քչերից էր, ով անջնջելի հետք էր թողնում:

63 «Ծիածանի» պարապմունքներին և տարեկան երկու-երեք անգամ տեղի ունեցող ընդհանուր ժողովներին Թումանյանի մասնակցության մասին վկայում է Մարգար Ավետիսյանը (**Ավետիսյան Մարգար Մկրտչի**, գրող, մանկավարժ, 20.05.1880, Նոր Բայազետ, այժմ Գավառ-1944, Թբիլիսի): Ըստ հուշագրի՝ Թումանյանը «բարձր հասակով, թիկնոցը թեին գցած, ներս էր մտնում դահլիճ՝ ծիծաղկոտ աչքերով, ժպտուն դեմքով՝ իր հետ բերելով ոգևորության, ուրախության և կայտառության մի շունչ, որը վարակում էր բոլորին: Ինքը՝ Թումանյանը, վարակված էր պատանեկան մթնոլորտից, ձուլվում էր իր զգացմունքներով այդ՝ «ամբոցներ կառուցող» պատանիների հետ» (ԹԺՀ, էջ 172):

64 Թումանյան, ԵԼԺ, հատ. 8, էջ 70:

65 ԹԺՀ, էջ 174:

66 «Զաւարեան», Ա. հատոր, էջ 327: «Միման Զաւարեան (Յիշողութիւններ)» խորագրով հուշերը ստորագրված է Մարգար: Խոսքը վերաբերում է գրող, մանկավարժ Մարգար Ավետիսյանին, տե՛ս N 63 ծանոթությունը:

Մ.Ավետիսյանը, ով Զավարյանին բնորոշում է իբրև աշակերտներից յուրաքանչյուրի համար «Սոկրատես», հիշում է նրանից լսած պատգամները, որոնցից էին՝ «**Կյանքում կովելու համար մարդուն հարկավոր է լուրջ գիտության զենքը**», «**Ամէն բան պիտի սկսել հիմքից, չշտապէք ու վայրիվերոյի տեղեկութիւններ կրկնող թութակ չդառնաք**» (ընդգծումները մերն են-Ս.Ը.)⁶⁷: Պատմելով Բոքլի «Քաղաքակրթության պատմության», Սոկրատեսի փիլիսոփայության թեմայով Զավարյանի դասախոսությունների մասին, Մ.Ավետիսյանը հավաստում է. «Մենք կարճ ժամանակով այնպէս գերուեցինք այդ աննշան արտաքինի տակ թաքնուած գիտութեան ու փորձառութեան գանձով, որ Զուարեանի հեռանալուց յետոյ որքան դասախօսներ եկան գնացին, մենք չկարողացանք նրա հմայքը թօթափել մեր հոգուց»⁶⁸: Ընդ որում, հենց սկզբից Զավարյանն աշակերտներին հայտնում էր, որ կարճ ժամանակում ինքն անգոր է շատ գիտելիքներ հաղորդել և խոստովանում էր. «Իմ տւածը թող լինի միմիայն ճանապարհ, զարգացում ու պատրաստութիւն ձեռք բերելու համար»⁶⁹:

Թէ Թումանյանը, թէ Զավարյանը մշտապես մտահոգված են եղել հայկական դպրոցների ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների մակարդակը բարձրացնելու խնդրով: Թումանյանը 1-4-րդ դասարանների համար նախատեսված «Լուսաբեր» դասագրքերի և արևելահայ ու արևմտահայ գրականությունը ներկայացնող «Հայ գրողներ» քրեստմատիայի երկու մեծածավալ հատորների համահեղինակ է: Իսկ Զավարյանն այդ խնդրով մտահոգ էր մասնավորապես Մուշում՝ 1910 թվականին: Այստեղ հիմնականում «ախոռներում» ու «օդաներում» տեղավորված դպրոցների (դրանք բոլոր դպրոցների 3/4-րդն էին կազմում) և ծայրահեղ չքավորության մեջ գտնվող ուսուցիչների (ամիսը 1 ոսկի վարձատրվող) որակը բարձրացնելու համար նա հիմնում է գրադարան, ուսուցիչներից ու հոգաբարձուներից հրավիրում է շրջանային ժողովներ, մասնագիտական և մանկավարժական վերապատրաստման դասեր կազմակերպում և ինքն էլ դասավանդում ու շրջաբերականներ է կազմում. «Իմ նպատակս է, 1910 թ. ապրիլի 26-ին գրում էր Զավարյանը Սարգիս Բարսեղյանին, Բարձր Հայքի համար, համապատասխան բարբառով, հայերենի դասագիրք կազմել»⁷⁰: Գյուղական շրջաններում կրթության տարածումը Զավարյանը կարևորում էր նաև հայրենասիրական ոգին վառ պահելու նպատակով: Նրա խոսքերով՝ «**Որչափ մարդիկ տոգէտ են, այնչափ նեղ է նրանց հայրենասիրութիւնը**» (ընդգծումը մերն է-Ս.Ը.)⁷¹: Բացի այդ հաճախ մարտնչող տգիտության հետ ամսյվող գործչի խորին հանդգամը նա կրկնում էր. «**Քանի տոգէտ է անհատը, այնքան աւելի նա համոզուած է իր խելօքութեան մէջ**» (ընդգծումը մերն է-Ս.Ը.)⁷²:

Լինելով քաղաքական գործիչ և ոչ թե պոետ կամ արվեստագետ և միշտ ամաջադրելով գործնական լուծումներ՝ ելք փնտրելիս Զավարյանը,

67 Նույն տեղում, էջ 328:

68 Նույն տեղում:

69 Նույն տեղում:

70 «Զավարյան», հտ. Բ, էջ 341:

71 Նույն տեղում, էջ 433:

72 Միմոն Զուարեան, Ի՞նչ կ ուզեն Դաշնակցականները, «Միմոն Զուարեան», հտ. Գ., էջ 618.:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

ինչպես և Թումանյանը, կարևորում էր ցանկացած գործի հիմքում սիրո և նվիրումի, մասնավորապես գիտակցությունից ծնված և ոչ կույր սիրո առկայությունը. «Մէրը, անկեղծ, անշահախնդիր սէրը, թե՛ ամենամեծ ազդակն է մարդու գործունէութեան, ստեղծագործութեան, և թե՛ ամենաառատ աղբիւրն է մարդկային երջանկութեան: Եւ այդ աղբիւրը գիտակցութենէ առաջ եկած սէրը չի ցամաքիր, չի հատնիր գործածելով» (ընդգծումը մերն է – Ս.Ը.)⁷³:

Աներկբա է, որ ազգային գրողի ու քաղաքական գործչի ցանկացած ձեռնարկի, այդ թվում՝ նոր սերնդին կրթելու փորձերի հիմքում դրված է եղել սեփական երկիրն ու ժողովուրդը, արվեստն ու գրականությունը, բնությունն ու պատմությունը ձանաչելու և այդ ձանապարհով հայրենասիրություն դաստիարակելու գերակա խնդիրը:

5. 1905–1906 թթ. հայ–թաթարական ընդհարումների հորձանուտում

Հայ–թաթարական ընդհարումներին նախորդած՝ Հայաստանյայց եկեղեցու գույքի բռնագրավման դեմ պայքարը առիթ դարձավ Թումանյանի՝ ՀՅԴ շարքերը վերադառնալու համար: Մեր ոչ վաղ անցյալի վավերագրերի բարեխիղճ ուսումնասիրողներից մեկի՝ Ավագ Հարությունյանի կարծիքով՝ «1904 թվականին Հովհ. Թումանյանը ոչ միայն վերադառնում, այլև ակտիվ գործունէություն է ծավալում ՀՅԴ–ի շարքերում, մասնավաճառ 1905 թ. սկիզբ առած հայ–թաթարական կռիվների շրջանում»⁷⁴: Ինքը՝ Թումանյանը, նույնպես վկայում է. «Ինքնապաշտպանության ժամանակ գրեթե ամբողջ Կովկասի հայ ժողովուրդը անխտիր մտավ Դաշնակցության մեջ... Էդ մի կողմից: Մյուս կողմից էլ, որովհետև սա դարձավ մի ռազմական բանակ, դժվար էր կարգին պահել»⁷⁵:

1905 թ. Բաքվի փետրվարյան արյունահեղ իրադարձություններից հետո Թումանյանն ու Ջավարյանը, ով նոր էր Կովկաս վերադարձել Կիլիկիայից և շատ ծանր էր ապրում ընկերոջ՝ Քրիստափոր Միքայելյանի մահը, միավորեցին իրենց ջանքերը հանուն Լոռու իրենց հայրենակիցների և ողջ արևելահայության ինքնապաշտպանության: Ջավարյանը Օդեսայից Կովկաս է հասնում 1906 թ. փետրվարի առաջին օրերին և նախ այցելում է Նիկոլ Աղբալյանի ընտանիքին, որի նկատմամբ մշտական հոգածություն է դրսևորել նաև Թումանյանը, ապա մեկնում է արյունահեղության կիզակետը՝ Բաքու:

Հատկանշական է, որ ռուսական առաջին հեղափոխության տարիներին բռնկված հայ–թաթարական ընդհարումներն ուղեկցվում էին նաև ժողովրդի սոցիալական պայքարով: Մի կողմից՝ Բորչալուի թուրքերն էին հարձակվում Թիֆլիսի վրա, մյուս կողմից՝ տեղի էին ունենում բանվորական գործադուլներ: Ուստի մի կողմից՝ ՀՅ Դաշնակցության աջակցությամբ Թումանյանը կազմակերպում էր հայրենի Լոռու ինքնապաշտ-

73 Նույն տեղում, էջ 642:

74 «Վէմ», Եր., 2009, ապրիլ–հունիս, N 1 (26), էջ 161: Այլ վկայություն հենց 1904 թվականին ՀՅԴ–ին Թումանյանի անդամակցության վերաբերյալ մեզ հայտնի չէ:

75 Թումանյան, ԵԼԺ, հատ. 10, էջ 23:

պանությունը, մյուս կողմից՝ Հաղպատի գյուղացիներն էին ապստամբում տեղի կալվածատերերի դեմ⁷⁶:

Այդ պատճառով 1906 թ. հունիսի 4-5-ին Դերեղի կիրճի ձախափնյա բարձրադիր սարավանդի վրա գտնվող Օծուն⁷⁷ (Ուզունլար) գյուղում կայանում է Լոռու 40 գյուղերի ներկայացուցիչների համագումարը՝ կալվածատերերի և գյուղացիների միջև հողային հարաբերությունները կանոնակարգելու գործին նպաստելու և այդ նպատակով փոխարքային ուղղվելիք հեռագիր նախապատրաստելու համար: Իբրև Ագարակ գյուղի պատգամավորներ, համագումարի մասնակիցներից հայտնի մանկավարժ Միմակ Սահակյանը⁷⁸ և ՀՅԴ գործիչ Վրեն Տաշրացին⁷⁹ հետագայում գրչին են հանձնել հետաքրքիր մանրամասներ Օծունում տեղի ունեցած այդ իրադարձության վերաբերյալ: Ս. Սահակյանը վկայում է. «Դաշնակցական լիդերներից, հիշում եմ, ներկա էր Միմեռն Զավարյանը»⁸⁰: Իսկ Վրեն Տաշրացու խոսքերով՝ «Այդ ժողովում հարեհասի պէս յայտնուեց մեր ազիզ Միմէռնը...Ներկայ եղող լօտեցիների յիշողութիւնից երբեք դուրս չի գնալ, ի միջի այլոց, նրա արտասանած բացման ճառը, որով հիանալի կերպով բացատրեց «Մէկն ամէնի համար, ամէնը մէկի համար» գաղափարը»⁸¹:

Համագումարի օրակարգում առաջինը ինքնապաշտպանության հարցն էր, երկրորդը՝ հողային խնդիրը: Ինքնապաշտպանության խնդրի քննարկումը կատարվում է Թումանյանի նախագահությանը, իսկ հողային հարցի շուրջ ծավալված մտքերի փոխանակությունը ղեկավարում է մասնագիտությամբ գյուղատնտես Միմոն Զավարյանը: Հողային հարցը մշտապես եղել է Զավարյանի ուշադրության կենտրոնում: Հետագայում նա այդ թեմայով Կարինում՝ «Ցառաջի» խմբագրատան «Հայ Երիտասարդաց Միության» սրահում, զրուցել է Անատոլիայում «քննական շրջագայության» դուրս եկած, Թուրքիայի «ելևնտական նախարար» Ճավիտ բեյի հետ և իր գիտելիքներով ու մտտեցումներով զարմացրել նրան⁸²:

Կովկասում հողահարկի մասին Զավարյանի գրավոր տեքստերից կա-

76 Երբ 1906 թ. օգոստոսին Ալավերդու պղնձահանքերի գործարանի Բորչալուի քանվորական կոմիտեն կազմակերպել էր գործադուլ, Թումանյանը շտապում էր Բորչալուի շրջանի գավառապետ Պյոտր Լեոնտևին հանձնել, որ գործադուլի հետ «ժայկական կոմիտենները» ամնչություն չունեն և այդ ընթացքում զբաղված են անկարգությունների, թալանի ու ավազակության դեմ պայքարով, գողերի ու թալանչիների դեմ դատական գործեր հարուցելով: Տես **Թումանյան**, ԵԼԺ, հտ. 10, էջ 2021: Նամակի հայերեն թարգմանությունը՝ նույն տեղում, էջ 453:

77 Օծուն գյուղում Զավարյանը Խեչումանց Ստեփանին և այլ գյուղացիների սովորեցրել էր այգին մշակելու գյուղատնտեսական ժամանակակից մեթոդները: Տես **Մ. Շահվերդյանի** «Երևնեկ էն օրին» հուշ-գրառումը՝ տպագրված 1913 թ. նոյեմբերի 3-ին, «Հորիզոնի» էջերում: Տես նաև՝ «Միմոն Զաւարեան», հտ. Ա., էջ 344:

78 **Տեր-Սահակյան Սենեքերիմ (Միմակ) Մկրտչի**, կրթական գործիչ, 25.08.1879., Լոռու Ագարակ գ. 29.04.1961, Երևան:

79 **Վերանյան Տիգրան (Հովհաննես) Ավետիքի** – քահանա, թարգմանիչ, մանկավարժ, Թումանյանի դասընկերներից, 1865, Լոռու Ագարակ գ. – 1937:

80 ԹԺՀ, էջ 535:

81 «Հորիզոն», Թիֆլիս, 1913, նոյեմբերի 9, N 253:

82 Տես **Միմոն Վրացեան**, Հանդիպումներ մեծ ծամբու վրայ, «Կեանքի ուղիներով», հտ. Բ., էջ 198-201: Տես նաև «Միմոն Զաւարեան», հտ. Ա, էջ 706: Այդ օրը Ճավիտ բեյի նախանձն է շարժել այն իրողությունը, որ Կարինի «մի բուռ հայութիւնը ուներ շէն դպրոցներ, տպարան, թերթ, մինչդեռ անհամեմատ ակելի բազմամարդ թուրքերը ոչինչ չունէին»: Զավարյանի խոսքը թուրքերեն թարգմանող ՀՅԴ գործիչ Արուսինն նկատել է. «Ճաւիտը սաստիկ ազդուեցաւ և նախանձով ըսաւ իր հետիւններուս. կ'ըսէք կեաւոր են ու կ'անցնինք: Տեսէք, ասոնք ինչեր ունին, իսկ մենք ինչ ունինք Կարնոյ մէջ...» (նույն տեղում):

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քարտի, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

րելի է պատկերացում կազմել Օձունում նրա ելույթի մասին: Նա հողահարկի բարեփոխությունը դիտում էր իբրև սոցիալական հարցի լուծման միջոց և առաջարկում էր հետևել քաղաքակիրթ երկրների օրինակին. «Մտցնելով ամէն տուրքի այն տեսակ ձևեր, որով հարուստը վճարում է շատ, աղքատը՝ քիչ՝ ամէն մէկը համապատասխան իր ստացուածքի...որ տուրքերը լինեն ուղղակի, եկամուտի համեմատ...Հարկերի աւելի արդարացի բաժանման խնդիրը համագիւղացիների մէջ կազմում է այն անհրաժեշտ և հասունացած խնդիրներից մէկը, որ իր մեծ տնտեսական և բարոյական նշանակութեամբ համարուելու է օրուայ հարց»⁸³:

Թիֆլիսի «Ալիք» օրաթերթում 1906 թ. ձիշտ նույն ամսին՝ հունիսին տպագրած հոդվածներում⁸⁴ Զավարյանը հստակ շարադրել է իր դիրքորոշումը. «Պետերբուրգի իմաստուն բիրոկրատները ընկան իրենց լարած ծուղակի մէջ: Բաժանելով գիւղացիներին քաղաքացիներից, նրանք ուզեցին խեղդել ազատութիւնը, իսկ հիմա կը տան եւ ազատութիւն, եւ հող»⁸⁵: Իսկ երկու շաբաթ անց՝ հունիսի 20-ին, Զավարյանը տպագրում է «Մեռած դասակարգ» հոդվածը, որում արտահայտված մտքերը, ըստ ամենայնի, հնչեցրել է նաև Օձուն գյուղում. «Գիւղացիները դարերի ընթացքում կեղեքուած աշխատատուրներ են, որ վերջ կը դնեն մեռած դասակարգին, կը թաղեն վերջապէս այն դիակը, որ չէ դադարում վարակել հասարակական մթնոլորտը նոյն իսկ այսօրուայ պատմական կարմիր օրերին»⁸⁶: Հոդվածն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Հրաժարուելով իրենց ժառանգական իրաւունքից պայական հողերի նկատմամբ, Կովկասի խոշոր կալուածատէրերը քաւած կը լինեն միայն այն մեղքերը, որը նրանք ունեն դէպի մեր երկրի ամենակեղեքուած ու ամենաաղքատ դասակարգը՝ աշխատատուր գիւղացիութիւնը»⁸⁷:

Խոսելով գյուղական շրջանների պայմաններին համապատասխան նոր օրենքներ մշակելու և եղածը փոփոխելու Ռուսաստանի իշխանությունների խոստումների մասին, Զավարյանը վստահ էր. «Այդ փոփոխուած կանոնների մշակմանը պիտի մասնակցեն տեղական ինքնավարութիւնները, կազմուած ռամկավարական սկզբունքների վրայ»⁸⁸:

Նույն շրջանում գրված իր «Ուղեցոյց Կովկասի և Ռուսաստանի գործունէութեան համար» խորագրով աշխատության մէջ Զավարյանը 5 կետից բաղկացած ծրագիր էր առաջարկում գյուղական ազգաբնակչության համար: Համաձայն այդ ուղեցոյցի՝

1. Գյուղացիների ներկայացուցիչներից ընտրված խորհուրդն իր առաջարկները պետք է ներկայացնէր Համայնական խորհրդին, որին վերապահված էր գյուղական համայնքների համար նոր հողեր գնելը, ջրանցք-

83 Տես Սիմոն Զաւարեան, «Հողային տուրքը» և հարկերը Կովկասում, «Մուրճ» ամսագիր, Թիֆլիս, 1901, N 10, էջ 200-219: Տես նաև՝ «Սիմոն Զաւարեան», հատ. Գ., էջ 246, 263:

84 «Ալիք», օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 6, Ա տարի, մայիսի 4, N 9, մայիսի 7, N 14, մայիսի 14, N 15, մայիսի 16, N 17, մայիսի 17, N 20, մայիսի 21, N 23, մայիսի 25, N 44, հունիսի 20:

85 Տես Սիմոն Զաւարեան, Հողի ձայնը Պետերբուրգում, «Ալիք» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 6, մայիսի 4: Տես նաև՝ «Սիմոն Զաւարեան», հատ. Գ., էջ 328-329:

86 Տես Սիմոն Զաւարեան, Մեռած դասակարգ, «Ալիք», Թիֆլիս, 1906, N 44, հունիսի 20, տես նաև՝ «Զաւարեան», հատ. Գ., էջ 376:

87 «Զանգ», Թիֆլիս, N 8, տես նաև «Զաւարեան», հտ. Գ., էջ 385:

88 «Սիմոն Զաւարեան», հատ. Գ., էջ 332: Տես նաև Սիմոն Զաւարյան, Հողի ձայնը Պետերբուրգում, «Ալիք» օրաթերթ, Թիֆլիս, 1906, 5 մայիսի, N 7:

ներ, աղբյուրներ, ճանապարհներ, գրադարաններ և կրթական այլ հիմնարկներ կառուցելը, գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բերելը և այլն:

2. Բռնի թե օրինական միջոցներով համայնքի և հողագործների սեփականությունը դարձնել կալվածատերերի ու բեկերի բոլոր հողերը:

3. Հողաբաժանումը կատարել ըստ շնչի, նախ բաժանել հեռու վայրերում գտնվող հողերն ու խոտհարքները, ապա ջրարքի և «մեծ արժեք ունեցող» բերրի հողերը⁸⁹:

4. Տուրքերից ազատ համարել կամավոր և առհասարակ զինվոր ունեցող ընտանիքներին, իսկ գյուղացու եկամուտի առաջին 200–300 ռուբլին ընդհանրապես չհարկել:

5. Յուրաքանչյուր տարի հանգանակություն կատարել և օգնել «թոյլ ու չքաւոր» գյուղացիներին և բոլոր նրանց, ովքեր տուժել են բնական աղետներից⁹⁰:

Հողաբաժանման հարցի շուրջ Օծունի համագումարում բանավեճեր են ծագել, և հողը կալվածատերերից խլելու կոչեր են հնչել: Սակայն ազդեցիկ է եղել լոռեցի ղեկավարների՝ Թումանյանի ու Զավարյանի խոսքը: Բանաստեղծը գյուղացիների ուշադրությունը ձգտում էր կենտրոնացնել միայն ու միայն ինքնապաշտպանության, իսկ Զավարյանը՝ նաև հողային հարցի արդարացի լուծման հեռանկարի հետ կապված խնդիրների վրա:

Հունիսի 7-ին Լոռու բնակչության անունից կազմվել և փոխարքա Վորոնցով Դաշկովին է ուղարկվել հեռագրի մի տեքստ, որի հեղինակներն, ըստ ամենայնի, եղել են Թումանյանն ու Զավարյանը: Հեռագրում արտահայտվել է գյուղացիների դժգոհությունը՝ Բորչալուի թաթար կալվածատեր Հասանբեգ Եղիզարովի հակահայկական գործողություններից⁹¹: Նա ներկայացվել է իբրև ազգամիջյան կռիվների հիմնական հրահրող, սպանությունների, ամեն տեսակ վայրագությունների կազմակերպիչ, և առաջ է քաշվել Եղիզարովին շրջանից հեռացնելու ու դատելու պահանջը: Հեռագիրը ստորագրել էին 15 լիազորված անձինք, այդ թվում, բնականաբար, Թումանյանն ու Զավարյանը⁹²:

Հայ-թաթարական ընդհարումների շրջանում բանաստեղծը գրեթե չի բացակայել Լոռուց: Այդ պատճառով նրան էին դիմում ոչ միայն օգնություն խնդրելու, այլև տեղեկատվություն ստանալու համար, քանի որ նա իրադարձությունների կենտրոնում էր: Այսպես, 1906 թ. դեկտեմբերի 16-ին

89 Միմոն Զավարյան, Ուղեցոյց Կովկասի և Ռուսաստանի գործունեության համար, «Միմոն Զավարեան», Ա. հատ., էջ 140–141: Զավարյանը շեշտում էր, որ անտառները, հանքերն ու արոտները, ջրերն ու ճանապարհները բաժանման ենթակա չեն և դրվելու են համայնքի հսկողության տակ: Հատորի կազմողները նյութը հրապարակելիս ծանոթագրության մեջ նշել են. «Ան ներկայացուած է, ըստ երևոյթին, 1905–1906 տարիներում մէջ գումարուած Ռայոնական զանազան ժողովներէն մէկուն», «Միմոն Զավարեան», Ա. հատ., էջ 136: Անշուշտ, Օծունի համագումարի ելոյթը նույնպէս շարադրված է եղել այս ուղեցույցի հիման վրա:

90 Տե՛ս «Միմոն Զավարեան», Ա. հատ., էջ 140–141:

91 Տե՛ս Օլգա Գուլարյան, Հուշեր, Եր., «Հայպետհրատ», 1957, էջ 134–135:

92 Տե՛ս «Ալիք», օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 60, հուլիսի 19: Հեռագրին ի պատասխան փոխարքան հուլիսի 24-ին Լոռի է ուղարկում փոխարքայի դիվանատան «հատուկ հանձնարարությունների պաշտոնյա», քննիչ Մեսայրովին, ով բողոքող կողմին հանդիպելու ու նրանց լսելու փոխարեն իջևանում է Զայալօղլիում Եղիզարովի ու նրա բարեկամների՝ Գրոզդովների տանը, վայելում նրանց հյուրընկալությունը, հետևաբար դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի «անաչառ քննություն» է վարում և ինչ է զեկուցում փոխարքային:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քարի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմբեր, 2013

ՎԻՄ համահայկական հանդես

Թումանյանը ստանում է Հովհ. Տեր-Մարտիրոսյանի (Ա-Դո)⁹³ դեկտեմբերի 14-ի նամակը Երևանից: Նամակագիրը Միսոն Զավարյանի հանձնարարությամբ ժամանակագրական և վիճակագրական մանրամասն տեղեկություններ էր խնդրում 1905-1906 թթ. Բորչալուի գավառում հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հայերի վրա կատարված հարձակումների, կրած վնասների չափի, մարդկային զոհերի մասին: Նա նաև փորձում էր պարզել, թե «Հայերը նպաստե՞լ են ընդհարմանը, տնտեսական դրությունը ո՞ր չափով դեր է խաղացել այդ ընդհարման մեջ: Հայերի բարվոք վիճակը ինչպե՞ս է ազդել թուրքերի վրա, և թե բեկերն ու կառավարչական պաշտոնյաները ո՞ր չափով են նպաստել այդ ընդհարմանը»⁹⁴:

Անշուշտ, Զավարյանի կազմած այս հարցերը կրել են ընդհանուր բնույթ և ուղղված են եղել տարբեր գավառներում ՀՅԴ ներկայացուցիչներին: Առհասարակ Զավարյանի ոճն էր՝ յուրաքանչյուր հարցի մանրագնի ուսումնասիրություն, վիճակագրական տվյալների ձեռքբերում և դրանց հետազոտության ու վերլուծության հիման վրա գործողությունների ծրագրերի մշակում: Հովհ. Տեր-Մարտիրոսյանի նամակը վկայում է, որ այդ տվյալները ըստ ամենայնի հավաքվել են հիմնականում Միսոն Զավարյանի մոտ, և նա է կողողինացրել ողջ տեղեկատվությունը:

Հավանաբար հենց այս շրջանում Զավարյանը ղեկավարել է նաև **12 անձից կազմված մի հանձնախումբ**, որը գնացել է Լոռի, մասնավորապես **Մարց՝ ազգային կալվածքների բարենորոգման ծրագրեր իրականացնելու նպատակով**: Այս մասին ևս իր հուշերում վկայում է նրա հարենակից Վրեն Տաշրացին. «Հայոց ազգը, Խրիմեան Հայրիկի օրով, լուրջ հարց էր դրել **բարեկարգելու** ազգային կալուածները, Թիֆլիսից տասն և երկու մասնագետներ գնացին Մարց և կազմեցին թղթի վրայ մի գեղեցիկ ու լուրջ ծրագիր, որով այդ միլիոններ արժեցող կալուածքը տասնեակ հազարներ պիտի տար, և այդ գումարի մի որոշ մասը, երևի, գնալու էր յօգուտ Լոռու ապագայ միջնակարգ դպրոցի: Այդ մասնագետների խմբի գլխավորը ու տոն տուողը Միսեոնն էր»⁹⁵ (ընդգծումը հեղինակինն է-Մ.Հ.):

Տաշրացու վկայությամբ՝ ժողովի ավարտից հետո Հայ առաքելական եկեղեցու Լոռու գործակալը դիմել է Զավարյանին՝ Արևելահայերի (Ռուսաստանոց) Կենտրոնական ժողովի համար նրա թեկնածությունը առաջադրելու խնդրանքով, և վերջինս սովել է իր համաձայնությունը: Եվ Զավարյանն ընտրվել է Մանահինում՝ «լոռեցիների ու շուլավերցիների միաձայն ու միահամուռ» ձայնով⁹⁶:

1906 թ. օգոստոսի 17-ին Էջմիածնի Գևորգյան ձեռնարանի հիվանդանոցի շենքում իր աշխատանքներն սկսեց Արևելահայերի (Ռուսաստանոց) Կենտրոնական ժողովը: Հանդիսավոր արարողությանը ներկայացել էր ծանր հիվանդությամբ տառապող, արդեն ուժասպառ կաթողիկոս Մկրտիչ

93 **Տեր-Մարտիրոսյան Հովհաննես Գրիգորի** (Ա-Դո) -գրող, վիճակագիր, հրապարակախոս, 14.01. 1867, Նոր Բայազետ, այժմ՝ Գավառ 07.02.1954, Երևան:

94 ԳԱԹ, ԹՖ, N 22-35 (հին համարը՝ 1156):

95 **Վրեն Տաշրացի**, Հիշողություններ, «Հորիզոն», Թիֆլիս, 1913, նոյեմբերի 9, N 253: Տե՛ս նաև «Զուարեան», հատ. Ա., էջ 394:

96 Հուշագիրն ավելացնում է, որ հետագայում Զավարյանը թուրքիմացաբար համարվել է միայն Շուլավերի պատգամավոր, մինչդեռ նա ընտրվել է Մանահինի ժողովում՝ Լոռու 18 և Շուլավերի 14 ձայներով: Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1913, նոյեմբերի 9, N 253:

Խրիմյանը, որի բացման խոսքը նույնպես համահունչ էր նրա առողջական վիճակին. «Ազգային գործը հիւանդ գործ է, որ հիւանդանոցում ժողովուրդ էր, – բազմանշանակ կերպով ակնարկեց Հայրապետը: Օրինեալ ըլլաք, որ եկել էք մեր ազգին հիւանդ գործերը բժշկելու: Աշխարհի բոլոր գործերը հիւանդ կերևին: Բայց մարդիկ էլ պակաս չեն բժշկելու: Կաղօթէմ, որ այս պատգամաւորական ժողովը մեր ժողովրդի ցաւերը, որ այնքան մեծ են, բժշկէ: Սակայն ազգի եռանդին, սիրուն նայելով, այդ հիւանդութիւնը շատ մեծ չպետք է թուայ: Կաղօթէմ Աստծուն, որ կարողութիւն տայ ձեզ յաջողելու այս ձեռնարկութիւնը»: Իսկ վերջում էլ Ամենայն Հայոց Հայրապետը, թերևս իր ակնարկն ուղղելով ժողովի դաշնակցական մեծամասնությանը, հորդորեց նրան. «Ողջամտութեամբ մտածեք, հեռու մնացեք չափազանցութիւններէ: Չափաւոր եղէք, ձեր ուժի համաձայն աշխատեցէք, ժամանակը ճանաչեցէք»⁹⁷:

Արևելահայերի (Ռուսահայոց) Կենտրոնական ժողովի նախագահի պաշտոնում ՀՅԴ-ն առաջադրեց Միմոն Զավարյանի թեկնածությունը: Առաջարկված մյուս հինգ թեկնածուները ինքնաբացարկ են հայտնում, և Զավարյանը ներկա 46 պատգամավորների քվեարկության արդյունքում ընտրվում է 36 կողմ, 7 դեմ և 2 ձեռնպահ ձայներով: Նախագահ ընտրվելուց հետո Միմոն Զավարյանը ներկաներին դիմեց հետևյալ շնորհակալական խոսքով. «Այն մեծ պատիւը, որին արժանացրիք դուք, ես չեմ վերագրում իմ անձնատրուբեան: Ես վերագրում եմ ասելի այն ուղղութեան, որին հետևել եմ ես: Ես վերագրում եմ այդ պատիւը մեր ժողովրդի բազմաթիւ անդամներին, որոնց հետ միասին ես ծառայել եմ, պահպանելու մեր ժողովրդի բռնաբարուած իրաւունքները: Բացի այդ կարծում եմ, որ շատերը ձեզանից, ձայն տալով ինձ, ղեկաւարտում էին այն հայեացքով, որ ես ունեմ դէպի մարդկային անձնատրուբիւնն առհասարակ: **Ես յարգել եմ և հիմա էլ յարգանքով եմ վերաբերում դէպի ամեն տեսակ անկեղծ համոզմունք: Ինձ թուում է, որ խորին համոզմունքի ձևով յայտնուած բոլոր մտքերում կայ ճշմարտութեան մի մաս, որ առողջ մտքերը սխալ են համարում գլխատրապէս այն պատճառով, որ յայտնում են ժամանակից շատ ուշ կամ շատ առաջ: Հետևապէս մարդու անձնատրուբիւնը բաժանելու է նրա յայտնած մտքից և կռուելով սխալ կարծիքների հետ, միշտ յարգելու է մարդու անձնատրուբիւնը:** Այստեղ ևս ես կը ղեկավարուեմ նոյն տեսակէտով, կը վերաբերուեմ ամենայն լրջութեամբ դէպի բոլոր ասածները, ամենայն յարգանքով դէպի բոլոր պատգամաւորների անձնատրուբիւնները: Նոյն վերաբերմունքը, յուսամ, ցոյց կտայ և ձեզանից ամեն մէկը, նամանաւանդ, որ մեր պատգամաւորներից իւրաքանչիւրը ներկայացնում է 20000 հայ ազգաբնակչութիւն, և պատգամաւորների պատիւը ձուլուած է այստեղ իր ընտրողների պատուի հետ» (ընդգծումը մերն է-Ս.Ը.)⁹⁸:

Այդ օրը Զավարյանը հանդես է եկել դայրոցական և առհասարակ կրթության ու լուսավորության հարցերի շուրջ զեկուցումով: Ներկայացնելով տարրական կրթություն չունեցողների տխուր վիճակագրությունը՝ նա ընդգծել է հասկապէս գյուղերում նախակրթարաններ և տարրական,

97 ՀԱԱ, ֆ.57, ց.1, գ. 375, թ. 9:
98 ՀԱԱ, ֆ.57, ց.1, գ. 375, թ. 10:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քառի, թիվ 3 (43) հայիս-մեպրեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

ապա միջնակարգ դպրոցներ բացելու անհրաժեշտությունը, դրանք կյանքի պահանջներին համապատասխանեցնելու, արհեստներ ուսուցանելու կարևորությունը, որպեսզի դպրոցներից դուրս եկող պատանիները «հնարավորություն ունենան պատրաստ լինել կեանքի համար»⁹⁹: Ջավարյանի առաջադրած կրթական ծրագիրը այսօր էլ արդիական է՝ հատկապես երեխաներին թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես առողջ դաստիարակելու, արժեքային ճիշտ համակարգ ձևավորելու հարցում. «Դպրոցները զարգացնելու են թե՛ երեխաների ֆիզիքականը և թե՛ ամրապնդելու նրանց մէջ մարդասիրութեան ու աշխատանքի գաղափարից բխող բարոյական սկզբունքները»¹⁰⁰:

Ջավարյանը կենտրոնանում էր նաև կրթության ծրագրի իրականացման դժվարությունների՝ մի քանի հարյուր հազար օտարախոս հայ երեխաների առկայության, հայերի միջև կրոնական տարբերության, դրամական միջոցներ հայթայթելու խնդրի բարդության վրա: Նա կոչ էր անում իբրև Ռուսաստանի քաղաքացիներ պահանջել պետական բյուջեից այն գումարները, որոնք հարկերի տեսքով գանձվում են հայերից, միաժամանակ ազգովի գիտակցել գործի կարևորությունը և դրամ չխնայել: Ս. Ջավարյանն իր ելույթն ավարտում է այսպես. «**Երբ մենք յիշենք, որ մեր հաւասարութեան, մեր գոյութեան միակ զէնքը կրթութիւնն ու լուսաւորութիւնն է, երբ մեր ժողովուրդը գիտակցէ, որ մեր զրահաւորներն ու բանակները մեր կուլտուրական հաստատութիւններն են, նա կը գտնէ միջոցներ, նա կանգ չի առնի անհրաժեշտ ծախքերի առաջ**» (ընդգծումը մերն է - Ս.Լ.)¹⁰¹:

Ուղիղ երկու ամիս էր անցել 1906 թ. օգոստոսի 29-ին ցարական ոստիկանության կողմից բռնությամբ ցրված Արևելահայերի Կենտրոնական ժողովից, երբ հոկտեմբերի 29-ին հայտնի դարձավ Մկրտիչ Խրիմյանի մահվան լուրը, և Միմոն Ջավարյանն ու Հովհաննես Թումանյանը շտապեցին Էջմիածին:

Միմոն Ջավարյանը գլխավորում էր ՀՅԴ պատվիրակությունը: Ըստ Միք. Վարանդյանի տպավորության՝ բավականին «անշուք թաղեցին Խրիմեանը»¹⁰², քանի որ թե՛ պահպանողական և թե՛ ազատամիտ համարվող տարրերը անտարբեր էին Մկրտիչ կաթողիկոսի հանդեպ: Նրանց համար Հայրիկը «անպէտք կաթողիկոս»¹⁰³ էր՝ «Էջմիածինը քանդող, դրամները անհաշիւ ծախսող»¹⁰⁴: Իսկ Խրիմյանի շիրմի առջև դամբանական կարդացող Ջավարյանին անվանեցին «շովինիստ», «կղերական» և այլն, սակայն «Միմոնի հոգը չէր»¹⁰⁵: Նա եկեր էր հասկցնելու ազգային միջակություններուն, որ մեծ մարդկանց չի կարելի չափել գաճաճ չափերով»¹⁰⁶: Իր ելույ-

99 Տե՛ս «Էջմիածնի «Կենտրոնական» ժողով» հաղորդումը, «Ջանգ» օրաթերթ, Թիֆլիս, 1906, N 8 և 18, տե՛ս նաև՝ «Ջաւարեան», հատ. Ա., էջ 156:

100 Նույն տեղում, էջ 155-156:

101 Նույն տեղում, էջ 161: Տե՛ս նաև «Ջանգ» օրաթերթ, Թիֆլիս, Ա. տարի, 1906, N 18, էջ 3:

102 Տե՛ս Միքայէլ Վարանդեան, «Մարդը և գործը» աշխատության «Բարոյական աշխարհահայեացքը» ենթագլուխը, «Միմոն Ջաւարեան», հատ. Ա., էջ 47:

103 Նույն տեղում:

104 Նույն տեղում:

105 Նույն տեղում:

106 Նույն տեղում:

թում, «ցանեն ու գայրոյթէն դողալով»¹⁰⁷, Զավարյանը Խրիմյանին ներկայացրեց իբրև հայրենիքի մարմնավորում, իբրև «Վասպուրականի լացող ու մարտնչող Արծի»¹⁰⁸, Մեծ Մարդասեր, Հայ ժողովրդի տառապանքների, նրան բաժին ընկած դաժան իրականության տրամադրությունների արտահայտիչ, սրտացավ, հանձարեղ, անսահման բարի անձ և այլն¹⁰⁹: Նա ըստ արժանավույն էր գնահատում Խրիմյանի վաստակը՝ ասելով. «Զարթնեցնել Կամայականութեան տակ հեծող մարդոց արժանապատուութիւնը, զարգացնել գերութեան մէջ ապրող հայի՝ ազգային ինքնաձանաչութիւնը եղել է Մեծ Մարդետերի ջանքերից մինը Ազգային անգիտակցութեան, խաւարի, բռնակալութեան շրջանում մեծցած մարդը՝ տուեց իր ազգին այն ամէնը, ինչ կարող էր.... Խրիմեան դրեց մեր ազգային ու հասարակական վերածնութեան մեծ շէնքի սկիզբը»¹¹⁰:

1908 թ. դեկտեմբերի 23-ին Թումանյանը որդու՝ Մուշեղի հետ միասին ձերբակալվեց: Նա մեղադրվում էր ՀՅԴ Արևելյան Բյուրոյի անդամների հետապնդող գաղտնի գործակալների դեկտեմբերի 11-ին տեղի ունեցած սպանության, կռավարության դեմ ապստամբություն կազմակերպելու, զենք տեղափոխելու և այլ հանցանքների մեջ: Ամիսներ շարունակ Թումանյանը մնաց Մետեխի բանտում, բոլոր հարցաքննությունների ընթացքում թաքցրեց Ս.Զավարյանի, Սևքարեցի Սաքոյի¹¹¹ և այլ գործիչների հետ իր հանդիպումներն ու համատեղ գործունեության բոլոր մանրամասները: Ավելին, նա համարձակվեց բացահայտ պաշտպանության տակ առնել ՀՅԴ-ն՝ կալանավորի յուրօրինակ դիվանագիտությամբ:

20-րդ դարասկզբի հայ հասարակական-քաղաքական, ինչպես նաև ազգային-մշակութային կյանքի աննախադեպ զարթոնքը պայմանավորված էր ինչպես պատմաքաղաքական կոնկրետ դրդապատճառներով, այնպես էլ մարդկային գործոնով, այն է՝ բազմադարյան պատմության մեջ հազվադեպ հանդիպող լուսավոր ու խոշոր անհատականությունների, ազգային ու մշակութային հիքրավի մեծ գործիչների, արվեստագետների ու մտածողների միևնույն շրջանում հանդես գալով: Ժամանակի այդ հայրենանվեր գործիչների, պատմության մեջ անջնջելի հետք թողած, հանուն ազգային շահի իրենց կյանքը նվիրաբերած խոշոր անհատների թվում են Զավարյանն ու Թումանյանը:

Հասարակական տարբեր խնդիրների զավարյանական ու թումանյանական արծարծումները, անկախ տարբերություններից ու ընդհանրություններից, այսօր էլ չեն կորցրել իրենց նշանակությունը և շատ կողմերով ուսանելի են: Նրանց հետազոտություններն ու հրապարակագրական հոդվածները, արտահայտած բազմաթիվ մտքերը և ապրած ողջ կյանքը ինքնատիպ դասեր են հայ գործիչների համար՝ բոլոր ժամանակներում:

107 Նույն տեղում:

108 Նույն տեղում:

109 Նույն տեղում, էջ 47, 177-180:

110 Տե՛ս Միմոն Զաւարեան, Գամբանական ծառ Խրիմեանի դագաղին վրայ, «Հայրենիք» շաբաթաթերթ, Պոսթըն, 1907, N 51 (441), էջ 4: Տե՛ս նաև՝ «Միմոն Զաւարեան», հատ. Ա., էջ 177, 179:

111 Սևքարեցի Սաքո (Ծովանյան), հայ ազատագրական շարժման գործիչ, ում հետ Թումանյանը բազմիցս հանդիպել էր 1905-1906 թթ. Լոռու ինքնապաշտպանությունը կազմակերպելիս: Ի դեպ, հենց Սևքարեցի Սաքոն է 1904 թ. Անդրանիկին ծանոթացրել բանաստեղծի հետ:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Ե (ԺԵ) քաղթ, թիվ 3 (43) հուլիս-սեպտեմբեր, 2013

ՎԷՄ համահայկական հանդես

Summary

THE MEETINGS OF THE GREATS **Part I: the warm friendship of Simon Zavaryan and Hovhannes Tumanyan**

Susanna G. Hovhannisyan

The social activity of the great persons – Simon Zavaryan and Hovhannes Tumanyan is one of the interesting pages of the Armenian political thought of the beginning of the 20th century. The meetings and cooperation of these two famous persons are connected to the activity of AR Federation, which was the primary force in the Armenian liberation war, as well as to the different spheres of the Armenian life activity. They were gathered with the idea of the survival and freedom of the Armenian people.

The social, national, educational and other projects of Zavaryan and Tumanyan had just one goal – to develop the social life and people in general. Nevertheless, that period full of political mess and disorder left all their projects undone.

Despite the different characters, they were holding the same views concerning the development of the national literature, the role of woman, patriotism, culture and so on. But they were in variance in the questions of foreign policy, especially in the question of Russia's policy.

Zavaryan and Tumanyan have almost always been on the same side of the barricade, they've been together in the same political group – «Young Armenia», in the same party – AR Federation. They have given lectures in the youthful secret organization called “Tsiatsan” (Rainbow), which purposed to introduce the Armenian literature and history to the people contributing in that way to the rise of the national self-consciousness and freedom-loving ideas. They have also run the risk together during the Armenian-Tatar conflict in 1905-1906.

Despite the differences and common things in approaches of Zavaryan and Tumanyan, they are very timely even now. Their researches and publicistic articles, numerous ideas and the whole life that they lived are original and necessary lectures for every Armenian public figure at all times.